



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՓԻՐՈՒՄՅԱՆ


Ա. Ա. Ֆ. Բ. Հ.

ԺՈՂՈՎՐԴՈՒԹՅԱՆ ՏԵՍԵՍՈՒԹՅԱՆ
5-ԱՄՅԱ ՊԼԱՆԸ

ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵԴ.ԱՆ. - 1930



Ս. ՓԻՐՈՒՄՅԱՆ

334384.31(47.93)

Պ-67

ԱՅՈՒԹՎՈՂ է 1961 թ.

Ա. Ա. Ֆ. Խ. Հ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

5-ԱՄՅԱ ՊԼԱՆԸ

Դ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

Դասը

Մասնաւոր աշխատավորություն

Խոսքական

Վաղ երաժշտ

Խոսքական

Խոսքական

Խոսքական

A II
11387

58.11 A

Հրատ. № 1259

Դրառնալ. № 5010 (ր) Պատ. № 332 Տիրաժ 3000

Գետհրատի Յերկրորդ Տպարան Յերկանում

1. ՄԵՇ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԸ

«Ճնտեսության պրանային կարգավորումը սոցիալիստական պետության մեծագույն նվաճումն եւ Հնդամյա պլանը սոցիալիստական շինարարության պայմաններում նշանակում ե, վոր մենք աշխատում ենք զուրս թոշել անհրաժեշտության թագավորությունից, մարդկության վրա ճնշող անտեսական տարերակին ուժիքի թագավորությունից դեպի աղատության թագավորությունը, դեպի դիտակցության թագավորությունը»:

Հիրավի վոր—«Նվաճում», վորովհետեւ կուսակցական (16-րդ կուսկոնքիերանն) և խորհրդավին (Խորհուրդների 5-րդ Համագումար) բարձրագույն սրբանների կողմից հաստատված «ԽՍՀՄ ժողովրդատնտեսական շինարարության հնդամյա պլանը» հրապարակ յեկավ յերկարամյա ջանքերի, «պլանի համար» տարվող յերկարատե պատքարի հետեւանքով, պլանի, վորի շուրջը մոռիլիքացիայի յենթարկեց կուսակցականու դիտական միտքը, պրակտիկ փորձը և սոցիալիստական շինարարության աշխատավորների հոկայտկան կոլեկտիվի ստեղծագործական յեռանդը:

Կարելի յե տեսը, վոր տնտեսական պլանի դադափարը ձնվից Հոկտեմբերյան հեղափոխության հետ միասին, վորովհետեւ սոցիալիստական տնտեսությունը, ամենից առաջ, պլանային տնտեսություն ե, վորակել վորպես պետություն կազմակերպված քանի գասակարգը ժողովրդական տնտեսության տարերակին պրոցեսները լինթարկում ե իր կազմակերպված ստեղծագործական կամքին, ուզզելով նրանց դեպի հիմնական նպատակները, այսինքն դեպի ամրապնդ հասարակության վերակազմությունը կոմմունիստական սկզբունքներով:

Ժողովրդական տնտեսության պլանավին դեկավարության գաղափարն իր ձեռագործմեւ ստացավ «հետեյալ որը», հենց վոր բանվոր գասակարգը դրավեց կենտրոնական իշխանությունը:

«Պրակես ժաղովրդատնտեսական պլան կազմելու «պատմական փորձ»՝ ընդմիշտ կմնա «եկեկտրիֆիկացիալիք» հոչակավոր «պլանը» (ԳԱՆԵԲՌՈՒ—Ռուսաստանի կեկտրիֆիկացման պետական հանձնաժողովի):

Ահա թե ինչ և պատմում այդ պլանի մասին ԳՈՅԵԼՌՈՒ-Ե-
աշխատանքների գլխավոր ղեկավար ու վուճորիչ Գ. Մ. Կրժիժա-
նովսկին խորհուրդների վերջին համագումարում «հնգամյա պլա-
նի» մասին արած իր զեկուցի մեջ.

«Դուք հիշում եք, թե այդ ինչ ժամանակ եր, Յերկիրը դեռ
գտնվում եր ուղղական սպառնալիքի տակ: Մենք դեռ շարու-
նակում ելինք գլորվել տնտեսական խորին փլուզման անդուն-
դը: Յեվ ահա կուսակցության դիրեկտիվը կազմվեց տնտե-
սական առաջին հեռանկարային պլանը: Մենք այն ժամանակ
հավաքեցինք մի բուռն գիտականունիկական աշխատավորնե-
րի և Վլադիմիր Իլյիչի անմիջական ղեկավարությամբ փորձե-
ցինք պարզել անտեսական այն քառորդ, վոր շրջապատռում եր
մեզ. փորձեցինք դիմել գիտության և տեխնիկալի նվաճումների
ոգնությանը և բանվորա-գյուղացիական այն ակտիվի աջակցու-
թյանը, վորի ստեղծագործական ուժը մենք տեսնում ու զգում
ելինք, չնայած շուրջը տիրող փլուզման և պատերազմին: Այդ
պլանի մեջ մենք ուրվագծեցինք մեր ապազա համարձակ գծա-
գիրը, այն շինարարության պատկերը, վորը, մեր տեսակետով,
մենք կարող ելինք և պետք ե իրազործելինք: Յեվ անմիջապես
լսվեցին ծիծաղի ճայներ. ասում ելին, թե դա վոչ թե ելեկտրի-
ֆիկացիալի, այլ ելեկտրոֆիկցիալի պլան ե. ասում ելին, թե
դա ողոեղիս լի, իրականությունից հեռու մի ստեղծագործու-
թյուն ե: 1921 թվի զեկուեմբերի 21-ին ԳՈՅԵԼՌՈՒ-ի այդ պլանը հաս-
տատվեց Ժողկոմխորհի կողմից: Նրա կատարման մինիմալ ժամ-
կետը նշանակվեց 10 տարի: Այժմ, խոսելով հնգամյակի մասին,
իս կը երես, մեր այժման նոր հաշվիներով, հնարավոր շինարա-
րության հանրագումարները հենց այն ժամկետի համար, վորին,
վորպես մինիմալ ժամկետի, հարմարեցված և ԳՈՅԵԼՌՈՒ-ի ամբողջ
պլանը: Յեվ ահա տեսեք, թե ինչպես, զինված փորձով, ունենալով
փաստական մեծ նվաճումներ, հենվելով վոչ միայն գիտական աշխա-
տավորների ստեղծագործության վրա, վոչ միայն «վերեից»
յեկող աշխատանքի վրա, այլև հենվելով կանքի իրական փաստի
վրա, «ստորին» բազմաթիվին կոլեկտիվի աշխատանքի վրա,
մենք մի ամբողջ շարք վենալիքն ուղղություններով երապես վերա-
տարում ենք միայն ԳՈՅԵԼՌՈՒ-ի նույն պլանի դրույթները (ставки):

Այդ և իրապես բացառիկ արժեքը ժողովրդատնտեսա-
կան առաջին պլանի, վոր կենինն անվանեց «կուտակցության»
յերկրորդ ծրագիր»:

Սակայն ԳՈՒՅՆԻՆ-ի պլանը, վոր կրում եր իր վրա ռադական կոմմունիզմի շրջանի հետքերը, չնայած իր խոչոր ռառավելություններին, զեռ «ժողովրդանահական այն միասնական պլանը» չեր, վորին ձգտում եր սոցիալիստական շինարարության աշխատավորների միտքը. մեր առջև բացվում եր «պլանի համար պալքարելու» տեսական մի շրջան, վորը «լցված» եր ԳՈՒՅՆԻՆ-ի առաջին պլանի ստեղծագործական գաղափարներով և վոր կաղմակերպչորեն ձեռակերպվեց խորհուրդների 8-րդ համագումարում: Այդ պլանը զրեց «պլանային կոմիսարիատին-Պետական Պլանային Հանձնաժողովի» (Պետպլան) հիմքը:

Կուսակցության 9-րդ համագումարն իր հերթին ձեռկերպեց պլանային աշխատանքի իսկական եյությունը. «Ծրագրված պլանի իրազործումը հանրավոր և վճ թե բանվոր դասակարգի առաջավոր տարրերի առանձին միաժամանակյա հերոսական ջանքերով, այլ սիստեմատիկ պլանաչափ համառ աշխատանքի միջոցով, վոր իր մեջ և առնում աշխատավորների ավելի ու ավելի հոծ մասսաներ:»

Այն որից մենք ականատես ենք այդ սիստեմատիկ պլանաչափ համառ աշխատանքին: Շնորհիվ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման զործում բանվոր դասակարգի ձեռք բերած մեծապուլքն հաջողությունների և ինդուստրիացման ուղիների վրա կատարվող տուածեմի շարժման՝ ուղարկած նախադպրյալներ ստեղծվեցին ժողովրդանահական միասնական հնգամյա պլանը կազմելու համար:

Սակայն այդ գործը պահանջեց ստեղծագործ աշխատանքի պալքարի ձիգ ապրիներ:

1925 թվի աշնանը կազմվեցին 1925/26 թվի վերահսկիչ (կոնտրոլային) առաջին թվերը: Նրանց մասին աշխատանքների զեկավար ընկ. Կրժիժանովսկին առում եր կուսակցության 15-րդ համագումարում: «Յես վերցնում եմ Պետպլանի՝ 1925—26 թ. վերասկիչ թվերը: Այդ թվերը կազմվել ենին միայն Պետպլանի աշխատավորների ուժերով: Մենք անկարող եյինք ստեղծել վոչ միայն Պետպլանի ու հանրապետությունների միասնական ֆրոնտը, այլև Պետպլանի ու գերատեսչությունների: Մենք չենք կարողացել սպամիել մեր զլխավոր անտեսական աշխատավորների փորձագրությունից, ուստի մենք սպամործեցինք դիտական հետպատական այն նրանքերը միայն, վոր գտնվում ելին Պետպլանում: Կաստվարությունը չեր կարող հենվել այս թվերի վրա,

վորպես ուղենիշների վրա, վորոնց համաձայն կարելի յէ կազմել ոպերատիվ տնտեսական պլան»:

Հետագա աշխատանքների ընթացքում այդ բացերը վերացնելու վրա յեր բնեռված պլանային մտքի ուշադրությունը: Այդ ժամանակվանից մինչև ալսոր մենք միքանի անգամ փորձել ենք կազմել հեռանկարանալին (պերսպեկտիվ) պլաններ, բայց վորպեսզի հնարավոր լիներ միասնական ժողովրդատնտեսական մի պլանով ընդգրկել մեր մեծ Միության հսկայական ու բազմազան ժողովրդատնտեսական որդանիլումը, պահանջվում եր վոչ միայն աշխատանքի ընդհանուր լարում, այլև փորձի ու նյութերի աստիճանական կուտակում, վորոնք հնարավորություն կտալին պլանային հաշվարկներն ու նպատակադիրքավորումները դնել հաստատուն հիմքերի վրա:

Կուտակցության 15-րդ համագումարն սպառիչ դիրեկտիվներ տվեց ժողովրդատնտեսական հնգամյա պլան կազմելու համար, դրան հիմք ընդունելով տերկրի ինդուստրիացման, դրույթի սուցիալիստական վերակառուցման, ժողովրդական տնտեսության մեջ կապիտալիստական տարրերը հաղթահարելու և մեր տնտեսական սիստեմի մեջ սոցիալիստական տարրերն ուժեղացնելու գլխավոր գիծը:

Կենտրոնական կոմիտեի հետագա պլենումները և կառավարական գործունելությունը կոնկրետացրին ու լրացրին այդ դիրեկտիվները, ուրվագծելով առաջիկա շրջանի համար տնտեսական շինարարության ուղիները և ինդիրները: Պահանջին որդանների պարտականություններ, ինչպես այդ միանգամյայն իրավացինչում և Միության Պետպլանը, սփերածել այս քաղաքականա-տնտեսական ընդհանուր դիրքավորումներն ու դիրեկտիվները կոնկրետ-տնտեսական և տեխնիկա-տնտեսական հաշվարկների լնությունը ու դարձնել գրանք պլանային տնտեսական շինարարություն առաջիկա հնգամյակի համար:

Խորհուրդների 5-րդ համագումարի կողմից հաստատված՝ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը և հանգիսանում և տնտեսական շինարարության կոնկրետ պլան առաջիկա հնգամյակի համար, վոր իր ամբողջ երթյամբ հենվում ե 15-րդ համագումարի և կենտրոնի հետագա պլենումների հիմնական դիրեկտիվների ու դիրքավորումների վրա:

Այս պլանի բոլոր աշխատանքների ղեկավար ընկ. Կրժիժանովսկին ասաց Համամիութենական 16-րդ կուսկոնֆերանսում:

«Ելուսակցությունը զբեց սոցիալիստական շինարարության վորոշակի ուղենիշները՝ 15-րդ համագումարը տվեց հնդամյա պլանի գլխավոր շինարարական գծերի հիանալի մշակած հրահանգը (նակազ): Զեկուցելով ձեզ այս պլանի հիմնական գծերի մասին, առաջին մասում պետք եր նշել, վոր պլանն ամբողջովին համապատասխանում է այս հիմնական շինարարական գծերին»:

Ի՞նչ են առում մեզ այս պլանի հիմնական նշումները: Միտքան ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների գումարն այս պլանով վորոշված է 64,6 միլիարդ ռուբլի, մինչդեռ նախընթաց հնդամյակին ժողովրդական տնտեսության մեջ ներդրումները կազմում ենին ընդամենը 26,5 միլիարդ ռուբլի: Անցած հնդամյակին արդյունաբերության մեջ մուծվել է 4,4 միլիարդ ռուբլի, պլանով նախագծված հնդամյակին ներդրումները հասնում են 16,4 միլիարդ ռուբլու: Անցած հնդամյակի 15 միլիարդ ռուբլու հանդեպ զյուղատնտեսության մեջ ներդրումները հասնում են 23,2 միլիարդ ռուբլու: Տրանսպորտի մեջ ներդրումներն աճում են 2,7 միլիարդ ռուբլուց մինչև 10 միլիարդ ռուբլի, և, վերջապես, ելեկտրիֆիկացիալի մեջ—0,9 միլիարդ ռուբլուց հասնում են 3,1 միլիարդ ռուբլու:

Այս հսկայական ներդրումների հետեանքով յերկրի հիմնական փոնդերի ընդհանուր գումարը 70 միլիարդ ռուբլուց բարձրանում է մինչև 128 միլիարդ ռուբլի, այսինքն՝ 82 տոկոսով. այդ թվում արդյունաբերության հիմնական փոնդերը 8,2 միլիարդ ռուբլուց հասնում են 23,1 միլիարդ ռուբլու և զյուղատնտեսության փոնդերը 28,7 միլիարդ ռուբլուց հասնում են 38,9 միլիարդ ռուբլու:

Կապիտալ ներդրումների այսպիսի ծավալի հետեանքով աճող արդյունաբերության արտադրանքն աճում է 18,3 միլիարդ ռուբլուց հասնում է 43,2 միլիարդ ռուբլու, այսինքն՝ արդյունաբերական արտադրանքը յեռապատկվում է նախապահերազմականի համեմատությամբ: Գլուղատնտեսության մեջ արտադրանքն աճում է ավելի քան 1 ու կես անդամ, հասնելով 16,6 միլիարդ ռուբլուց 25,8 միլիարդ ռուբլու: Յերկաթուղուաշխատանքն աճում է 80,8 միլիարդ տոնն-կիլոմետրից մինչև 163-ի: Ժաղովրդական ամբողջ տնտեսության՝ զուտ արտադրանքը 24,4 միլիարդ ռուբլու կամի մինչև 49,7 միլիարդ ռուբլի, մասնավորապես՝ ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կամի 2,8 անդամ, իսկ արտադրության միջոցներ ար-

տաղըող արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կավելա-
նա 3,3 անգամ։ Արտադրվող ելեկտրո-էներգիայի քանակը 5 մի-
լիարդ կվտ.-ժամից կրարձրանա մինչև 22 միլիարդ կվտ.-ժամ
հնգամյակի վերջում։ Սև մետաղի—թուղի (չուգունի)՝ ար-
տադրությունը $3^{1/2}$ միլիոն տոննից կրարձրանա մինչև 10 մի-
լիոն տոնն։ Քարածխի հանքահանումը կաճի և 35 միլիոն տոն-
նից կհասնի 75 միլիոն տոննի։ Մեքենաշինական արդյունաբե-
րության ընդհանուր արտադրանքը կաճի $3^{1/2}$ անգամ։ Գիմիա-
կան պարարտանյութերի արտադրությունը կհասնի մինչև 8 և
ավելի միլիոն տոննի՝ հնգամյակի առաջին տարվա 175 հազար
տոննի հանգեց։

Ծնորհիվ արդ առաջիսաղացումների, արդեն հնգամյակի վեր-
ջում զգալիորեն կփոխվի ԽՍՀՄ տեսակարար կշիռը համաշխար-
հային արտադրության մեջ։ չուգունի ասպարիզում ԽՍՀՄ վե-
ցերորդ տեղից կանցնի լերրորդ տեղը (Գերմանիայից և Միա-
ցյալ Նահանգներից հետո), քարածխի բնագավառում—հինգերորդ
տեղից չորրորդ (Միացյալ Նահանգներից, Անգլիայից և Գերմա-
նիայից հետո)։

Սակայն ժողովրդական տնտեսության ընդհանուր աճը
հնգամյա պլանում գնում ե՝ ինչպես քաղաքի, նույնպես և գլո-
բի սոցիալիստական վճռական աճի ուղղությամբ՝ ժողովրդական
տնտեսության կապիտալիստական տարրերի հաշվին։ Առանձնա-
պես առաջ ե գնում հանրախացված հատվածը վյուղատնտեսու-
թյան մեջ։ Հանրախացված հատվածի ցանքերի տարածության
աճը հասնում ե 26 միլիոն հեկտարի, այդպիսով կազմելով ցան-
քերի ընդհանուր տարածության 17,5 տոկոսը և 33 թվի վերջին
ապահովում ե ընդհանուր արտադրանքի $15^{1/2}$ տոկոսը և առ-
րանքային արտադրանքի ու հացահատիկային մշակույթների
43 տոկոսը։ Ընդումին պիտական խորհանտեսությունները կատան
34 միլիոն ցենտներից վեց պակաս ապրանքային հացի արտա-
դրանք, իսկ կոլտնտեսությունները՝ 50 միլիոն ցենտներից վոչ
պակաս, վոր կկազմի բանվորական պետության ձեռքին կենտրո-
նացած հացի 500 միլիոն փթից ավելի։ Կոլտնտեսությունների
ընդհանուր արտադրանքի բաժինը 1 տոկոսից կրարձրանա մին-
չև 11,4 տոկոս։ Կոռպերացված մանր արդյունաբերության ար-
տադրանքի բաժինը մանր արդյունաբերության ամբողջ արտա-
դրանքի վերաբերմամբ կրարձրանա 19,4 տոկոսից մինչև 53,8
տոկոս։ Մանրածախ ապրանքաշրջանառության կոռպերացումը

60,2 տոկոսից կրաքրանա մինչև 78,9 տոկոս Գլուղատնաևսական կոռպերացիալի տնտեսությունների քանակը 9,5 միլիոնից կրաքրանա մինչև 23,58 միլիոն, այսինքն՝ բոլոր տնտեսությունների 37,5 տոկոսից կհասնի 85 տոկոսի Կոռպերացված սպառող բնակչության քանակը քաղաքում 8,7 միլիոն փայտերից կրաքրանա մինչև 16,5 միլիոն, իսկ գլուղում 13,9 միլիոնից մինչև 30,8 միլիոն:

Սոցիալիստական հատվածի արդարի աճը աներկրալորեն ցույց է տալիս բնավոր գասակարգի զեկավար գերի ամրացումը և զողման անպիսի նոր ձեռք և ստեղծում քաղաքի ու գյուղի միջև, վարոնք նպաստում են գյուղատնտեսության հիմնական վերակառուցմանը՝ կոլեկտիվացման և բարձրագույն տեխնիկայի հիման վրա:

Ժողովրդական լեկամուտը յուրաքանչյուր տարի աճում և 12 տոկոսով, այսինքն՝ 4 անգամ զերազանցում և մինչհեղափոխական Ռուսաստանի ժողովրդական յեկամտի աճին և զերազանցում և ուզածդ կապիտալիստական լերկրի նույնորինակ աճին: Այդ աճը մեզանում հասնում և 49,7 միլիարդ սուրլու՝ 24,4 միլիարդ սուրլու հանգեց, այսինքն՝ ավելանում և 103 տոկոսով՝ ժողովրդական յեկամտի սոցիալական կազմությամբ (սարուկտուրալով) բնորոշվում և արդյունաբերական բանվորների աշխատավարձի աճը, իրական (ոհալ) աշխատավարձը հնգամյակի վերջում՝ կրաքրանա 71 տոկոսով, ընդունին այդ յեկամտի տեսակարար կշնոր ժողովրդական տնտեսության ընդհանուրը լեկամբութիւնը՝ 32,1 տոկոսից կհասնի 37 տոկոսի:

Յերկրագործ բնակչության յեկամուտը կամ 67 տոկոսով, բայց այս յեկամտի տեսակարար կշիռը ժողովրդական ամրող տնտեսության մեջ, պլանի մեջ ընդունված զիրքավորման կապակցությամբ, կընկնի 49,8 տոկոսից մինչև 42,5 տոկոս:

Առանձնապես հատկանշական են հնգամյա պլանի վրա կային զիրքավորութերը, վորոնք հանդիսանում են պլանի ոհալ իրագործման անհրաժեշտ նախադրյալներ: Այսաեղ մենք ունենք արդյունաբերության աշխատանքի արտադրողականության 110 տոկոս աճ, արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի 35 տոկոս իջեցում, գյուղատնտեսության մեջ բերքատվության 35 տոկոս բարձրացում, շինարարության ինքնարժեքի 50 տոկոս իջեցում, լերկաթուղարին փոխադրանքների 25 տոկոս իջեցում, վտակիրի ծախսերի տեսակարար կշուի 30 տոկոս իջեցում արդյունաբերության մեջ և 15 տոկոս՝ տրանսպորտի մեջ:

Ահա թե ինչո՞ւ ներկայումս հաստատված ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը ամենայն իրավամբ կոչվել է ռմիծ աշխատանքների պլան։ Նման մասշտաբները, —վորոնց մտածն գաղափար չի ունեցել բուրժուական վոչ մի պետություն անցրալում, կարելի յե ասել, վորոնց մասին գաղափար չի ունեցել մարդկային պատմությունը տնտեսական շինարարության ասպարիզում, —անվտանություն են ներջնում լերքեմն վոչ միայն մեր թշնամիներին, այլև կասկածի առիթ են տալիս մեր լերկում վոմանց՝ այդ մասշտաբները չզիջելու հնարավորության նկատմամբ։ Չե վոր Դոնբասը կապիտալիստները կառուցել են 40 տարվա ընթացքում, իսկ մենք հրապարակ ենք քաջում Դոնբասսի հանքահանումը կը կնապատկելու պրոբլեմը, այսինքն՝ խնդիր ենք առաջադրում մեզ՝ հնգամյակի ընթացքում անելայն, ինչ կապիտալիստներն արել են 40 տարվա ընթացքում։ Սակայն վոչ մի անվտանության մասին խոսք չի կարող լինել Հնդամյակի առաջին իսկ տարին ցույց տվեց մեզ, վոր կյանքն ինքնին արդարացրեց պլանալին լենթաղբությունների ամենահիմնական ու ամենազդիսավոր մասերը։ Համենայն դեպք՝ բոլոր տեմպերը դուրս լեկան իրական և իրենց վճռական մասերում փաստորեն իրացվել են գերազանցումով։ Այդ պատճառով՝ վոչ մի հիմք չկա կարծելու, վոր այդ տեմպերը չեն պահպի նաև հետագայում։ Ընդհակառակը, լեկակետ ընդունելով հնգամյակի իրագործման առաջին տարվա փորձը, մենք արդեն ունենք մի շարք կառավարական պահանջներ, վորոնք նշում են ավելի բարձր տեմպեր ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի ընագավառում, քան այն տեմպերը, վոր նախատեսել ե հնգամյակը ածուխ, նավթ, ավտոտրակտորաշինարարություն, գունավոր մետաղագործություն, եքսպորտ, բամբակարուծական շրջանների շինարարություն և այլն)։

2. ՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15-րդ համագումարի դիրեկտիվը նկատի ունի Միության իր ծավալով հսկայական և իր հնարավորություններով հզոր ամրող ժողովրդատնտեսական որդանիզմը։ Իսկ Միության շրջաններից լուրագանչյուրը, ըստ իր ընական, աշխարհագրական, պատմական ու այլ առանձնահատկությունների և, մանավանդ, համապատասխան իր արտադրական ուժերի կացության, պետք և իր վրա վերցնի այս ընդհանուր առաջաղբություններից

առանձին մասի իրազործումը, պետք և դանի, այսպէս ասած, «իր տեղամասը» տնտեսական ընդհանուր ֆրոնտում:

Այդ հանդամանքն իր ժամանակին ճիշտ հաշվի յե առել կուսակցության անդրկովկասյան կազմակերպությունների 5-րդ համագումարը. նա պահանջել և «կազմել այնպիսի հնգամալապլան, վորը, հանդիսանալով պլան շրջանալին հատումով (Եթե բարեկարգ կազմակերպության վարդադան պարզացման առաջանակությունները մեր տնտեսության զարգացման պարզացման առաջանակությունները, միաժամանակ համապատասխաններ նաև ԽՍՀՄ պլանի նպատակալին հիմնական բոլոր զիրքագորումներին):

Հիրավի, ամենատարրականն ծանոթությունը մեր լերկրի աշխարհագրությանը պետք և համոզի, վոր շրջանների գործունելության մասնադիտացման քաղաքականությունը միայն հնարավորությունն կոտո՞ւ ամենալայն ու ամենամեծ չափերով՝ ամրացնելու անտեսության պլանալին մեթոդները՝ «Համատեղելով իր մակերեսույթի վրա տունդրա ու տայգա, տափաստան (степь) ու մերձարեսագարձալին անապատներ. ունենալով իր տերրիտորիալում ցրտի համաշխարհալին բեկո (Վերխուանսկ) և այնպիսի վայ-վեր, վորակեղ տարեկան ջերմության աստիճանը 0°-ից ցած չի իջնում. արբարեակելով շահնեկան այնպիսի ոգտակար հանածոների հսկայական արևպիսի կուտակումների, ինչպես Ռուալը՝ մի կողմից, և անկենպան, ավազոտ անապատները՝ Միջ. Ասիայում՝ մրու կողմից, և առալով զուուզանտեսական բնակչության խոռոչության այնպիսի տարբերություն, վոր ընակիչների թիվը վորոշ շրջաններում մի քառակուսի կիլոմետրի վրա կազմում և 130 ու ավելի մարդ, իսկ այլ ուայտներում չափվում և մի հոգու տասնորդական, նույնիսկ հաշյուրերորդական մասերով. ունենալով մինչեւ աչսոր իսկ իր տերրիտորիալում ամենաքիչը, պատմականութեն մեզ հայտնի, տնտեսական հինգ լեզանակ (յոկադ), — ԽՍՀՄ չի կարող այլ կերպ կառուցել ու զարգացնել իր ժողովրդական տնտեսությունը, քան լեթել լիովին հաշվի առնելով իր լայնածավալ միացման անտեսական ու ազգային առանձնահատկությունները և մասնագիտացնելով նրա առանձին մասերը։ Այս ձառնապարհով միացն հնարավոր և հասնել հստարակական աշխատանքի եփինեկության ամենաբարձր կոնֆիցիենտին (ԽՍՀՄ Պետպլան), նույնիսկ արգի կապիտալիստական պետությունների պատմությունն ու փորձը լիովին ապացուցում են, թե յորաքանչյուր շրջանում նպատակահարմար և զարգացնել արտադրու-

թիան այն տեսակները միայն, վորոնց համար այդ շրջանում կա բնական միջավայրի և աշխատանքալին գործունելութիւն կոնկրետ ձևերի ամենաբարենպաստ (ոպտիմալ) զուգակցություն:

Ավելի ևս տնտեսական շրջանացումը, վորպես պլանային տնտեսութիւն անհրաժեշտ՝ նախադրյալ, պետք ե իր հստակ կիրառումը գտնի սոցիալիստական տնտեսութիւն պայմաններում, ինչպիսին ե մեր Միության տնտեսությունը։ Սոցիալիստական տնտեսությունը պետք ե նկատի առնվի վորպես միասնական «ձեռնարկություն», վորտեղ պիտի իրագործվի աշխատանքի բաժնանման բարդ սիստեմը։ Սակայն շրջանացման և մասնագիտացման սկզբունքը յուրաքանչյուր տվյալ շրջանի համար հանգում ե «իր բոլոր կարիքները ինքն իր միջից բավարարելուց» հրաժարվելուն։ Յուրաքանչյուր շրջան այլևս չկնելով ունիվերսալ արտադրող, վոր բավարարում ե իր բոլոր պետքերը, կազմակերպելով իր ներսում գլխավորապես միայն վորոշ ապրանքների կամ մի խումբ ապրանքների մասսայական արտադրությունը՝ իր ռայոնից դուրս գտնվող լայն շուկայի համար—դրանով իսկ մտնում ե միջնարջանալին աշխատակցության և կապերի սիստեմի մեջ այն շրջանների հետ, վորոնք պետք ե լրացնեն արտադրութիւն միջոցների և սպառման նրա այն կարիքները, վորոնք դուրս են գտնվում նրա հիմնական մասնագիտացման շրջանակից։ Այդպիսով՝ ԱՍՖԽՀ ժողովրդական տնտեսությունը ևս մնկուացված ու ինքնարավ ուրանիզմ չ։ Անզրիփեգերացիալի տնտեսությունը մասնական տնտեսության կազմի մեջ, վորպես նրա անբաժան որդանական մասերից մեկը։

ԽՍՀ Միության Պետականը հետեւյալ կերպով ե բնորոշում ԱՍՖԽՀ բնական հարստությունները և նրա տեղը հանրապետությունների Միության մեջ։

«Բնդերքների հարստությունների, թե հետախուզված ու շահագործվող (նավթ, պղինձ, մանգան, քարածուխ, զանազան հանքեր) և թե չհետախուզված ու զեռ չմշակված (յերկաթ, ցեմենտ, մետաղներ, քարածքի նոր բնավայրեր), անտառների հսկայական արհեքավոր տեսակներ, հողականական այն պայմանների ամբողջ կոմպլեքսը, վորոնք չափազանց բարենպաստ ևն մերձարկագարձալին արժեքավոր մշակութների համար (բամբակ, ծխախոտ, թել և այլն) և, վերջապես, յերկրի գետերի ու լճերի

մեջ յեղած ջրային եներգիայի հսկալական պահեստները, — ահա բնական այն ռեսուրսները, վորոնք պետք է ավելի ու ավելի մեծ չափով մտցվեն տնտեսական շահագործման մեջ, հանդիսանալով Անդրկովկասի մասնագիտացումը յևլ դարձնելով նրան համամիտքենական տնտեսական ուղանիզմի անփոխարինելի մասը»:

ՅԱՖԻՆ ՅԵՎ ՆՐԱ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄՖԻՆ ընդհանուր տարածությունն է 185,457 քառ. կիլոմետր, և նա գտնվում է Կովկասյան գլխավոր լեռնաշղթալից դեպք հարավ, Աև ու Կասպից ծովերի միջև։ Համաձայն 1926 թ. մարդահամարի տվյալների ԱՄՖԻՆ ընակչությունը հավասար է 5,814,000-ի, հետեւալ ստորաբաժանմամբ ըստ գլխավոր հանրապետությունների։

Ադրբեյջան	2,302,000, ալդ թվում՝
-----------	-----------------------

քաղաքային	638,000 և
-----------	-----------

գյուղական	1,665,000
-----------	-----------

Հայաստան	870,700, ալդ թվում՝
----------	---------------------

քաղաքային	159,760 և
-----------	-----------

գյուղական	710,960
-----------	---------

Վրաստան	2,641,360, ալդ թվում՝
---------	-----------------------

քաղաքային	569,900 և
-----------	-----------

գյուղական	2,070,000
-----------	-----------

Արագիսով գյուղական ընակչության մասը հավասար է՝
--

Ազրբեյջանում՝ 72,3 տոկոսի,

Հայաստանում՝ 81,7 »

Վրաստանում՝ 78,4 և և միջին հաշվով՝

ԱՄՖԻՆ՝ 75,7 »

Ամբողջ տարածություն 1 քառ. կիլոմետրի վրա տպրում են՝

Ազրբեյջանում՝ 26,8 հազի

Հայաստանում՝ 29,1 »

Վրաստանում՝ 37,9 »

Իր խոռությամբ ԱՄՖԻՆ ընակչությունը տեղի է տալիս ԱկԱԽ Հանրապետությանը (58 մարդ) և զգալիորեն զերազանցում և ԽԱՀՄ ընակչության միջին խոռությանը (18 մարդ):

Քաղաքային բնակչության գլխավոր միջուկը կազմում են Յալրաքաղաքները—

Բագուն իր նավթահանքերով 446.830 հազ.

Այսպիսով, ընդհանուր առմամբ, քաղաքային ամբողջ ընակչության 791,000 հոգին կամ 50 տոկոսը գտնվում է մայրաքաղաք-ներում:

ԱՍԹԽՀ բնակչության հատկանիշը հանդիսանում և նրա
բազմացեղությունը: Բնակչության հիմնական ազգային խմբակ-
ներից զատ՝ աղքարեղանլան թյուրքեր, հայեր, վրացիներ, այստեղ
ապրում են նաև պարսիկներ, տաճիկներ, թալիջներ, քրդեր,
ոսիր, լեզգիներ, չեչեններ, արխազներ, թաթարներ, աջարներ,
ռուսներ, հրեաներ, հույներ, թուրքեր և այլն:

Բնակչության այսպիսի մեծ բազմացնեղությունը բացատըրվում է ինչպիս պատմական պատճառներով, նույնպես և վորոշափով ֆիզիկա-աշխարհագրական պայմաններով:

Կովկասյան գլխավոր լեռնաշղթան, կտրել-անցնելով Կովկասյան պարանոցը Սև ծովից մինչև Կասպիականը, ունի մոտ 1,600 կիլոմետր լեռկարություն և տալիս ե բազմաթիվ ձկուղավորություններ, վորոնք հաճախ փոխվում են լնոնային խոշոր մասսաֆլուքտի, չունենալով վորոշակի արտահայտված ուղղություն ինչպես Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի, նույնպես նաև լեռնալին մյուս գագաթների գգալի բարձրությունը մի կողմից՝ պարագանակություն և յերկրի կլիման ու լեռնագրությունը և լյուս կողմից՝ դժվարեցն վորոշում և բնակչության պարագաներ:

ԱՍՖԻՆՀ մակերևույթը ծովի մակարդակից ունեցած իր բարձրությամբ՝ բաժանվում է հետեւյալ կերպով. Նրա տերթիսորիալի 21 տոկոսը գտնվում է Սև ծովի մակարդակից 1,800 մետր բարձրության վրա և նվազ մատչելի լեռնաստոնն է (нагорье). 35 տոկոսը գտնվում է 600-ից մինչև 1,800 մետր բարձրության վրա, այսինքն հանգիստանում և սաստիկ կտրտուկ նախալեռնաստան (предгорие) և միայն 44 տոկոսը ցածր է 600 մետրից. Իսկ մինչև 300 մետր բարձրությամբ հարթավայրերը կազմում են բնդամենք մոտ 30 տոկոս:

Ի՞ր աշխարհնազբական դիրքով ԱՄՖԽՀ պետք է ունենար ծովալին տաք կլիմա։ Սակայն նրա մակերևույթի բացառիկ կարտուկությունը, լեռնալին բարձր պլատոնի գոլությունը նր-

պատում են յերկրի կլիմայի մեծ խալտարգետությանը։ Ալստեղ պատառում են տափաստանացածաքային, տափաստանալեռնային և անտառային կլիմաների համարյա բոլոր տեսակները։ Այստեղ մենք հանդիպում ենք ամեն տեսակ կլիմաների՝ բնեուալինից սկսած մինչև մերձարեադարձալինը։

Տատ բազմատեսակ են Ա.Աֆելչ մեջ նաև հողերը (ոչվա, զետին)։ Բնականարար, Փիզիկա-աշխարհագրական պարմանների արագիսի բազմազանությունը նախորոշում է նաև բնակչության տնտեսակենցաղային յեղանակները, մանավանդ այն մասի մերարեմամբ, վոր դրազվում է զլուղատանտեսությամբ։

Ալսպես, որինակ՝ մինչեւ 1,200 մետր բարձրության վրա հնարավորություն կա մշակելու բամբակ, խաղող, ծխախոտ, թել և պարապել ալգեգործությամբ (ծառապտղի մշակությամբ), ավելի բարձր զոտին, մոտավորապես մինչեւ 2,000 մետր, բռնում է զլխավորապես հացահատիկային տնտեսությունը և, վերջապես այդ զծից ավելի բարձր զոտիում, ալպյան արոտատեղիներ ունենալու հետեանքով, ստեղծվում են բարենպաստ պարմաններ անտառապահության, մանավանդ կաթնատու անտառների զարդարման համար։

Տերրիտորիակի չափազանց լեռնոտությունը, անմիջականորեն ազգելով բնակիչների պարապմունքների վրա զլուղական վայրերում, ստեղծում է նաև մեծ կղզիացում առանձին շրջանների համար և հաճախ լուրջ արգելք և հանդիսանում հաղորդակցության ճանապարհների զարգացման համար, իսկ զա, իր հերթին, բացասարար և անզրագառնում լերկրի անտեսական զարգացման վրա։

Ա.Աֆելչ զետերը մեծ մասամբ կրում են լեռնային բնույթ և իրենց այժման զրությամբ այնքան ել հարմար չեն նավազնացության ու փայտեղեն զետահետեւ (для сплава) համար, մի հանգամանք, վոր իր հերթին զժվարացնում և անտառային հարուստ մասսիների մշակումը։

Կասպիականի ծովափի մի մասում նուր և բնակչությունը, զարովնահե չկան նամիերի կանգնելու համար բնական հարմար տեղեր, չկա բավարար քանակությամբ խմելու ջուր, և հաճախակի չեն չոր կիզիչ հողմերը։

Արեւլան Անդրկովկասի տափաստանների հսկայական տերրիտորիան (Եիրակի, Միլի, Մուղանի ու Սալլանի զաշտերը), կազմելով, այսպիս կոչված, Քուռ-Արաքսալան դաշտային մասսիվը,

ունի բարենպաստ հող և կլիմայական պայմաններ արժեքավոր բուսերի, մասնավորապես բամբակի մշակության համար, բայց այժմ նու ներկալացնում ե իրենից աղտաղտուկային (СОЛООНЧАКОВЫЕ) ընդարձակ անապատներ, վոր կարուտ են վոռոգման։

Արեմտյան Անդրկովկասում կան հողերի հսկայական մասսի մասեր (Կոլխիդայի ճահիճները), վորոնք իրենց հողային ու կլիմայական պայմաններով հանդիսանում են նույնպես չափազանց հարուստ շրջան մերձարեադարձային արժեքավոր մշակութների համար, սակայն այստեղ անհրաժեշտ է կատարել ճահիճները չորացնելու աշխատանքներ։

Անդրկովկասի դաշտային ու լեռնային բուսականությունն աչքի լի ընկնում իր բացառիկ բազմապիսությամբ։ Այստեղ պատահում են լեռնային անտառներ և արժեքավոր տեսակի ծառեր ունեցող անտառներ (շիմշատ-սամշիտ, դափնի, եվկալիպտ), չոր սաղարթավոր անտառներ, վոր իրենց բնություն մոտենում են Հարավային Յեվրոպայի անտառներին (կաղնի, բոխի, հացի, շագանակենի), հաճարենու (բուկ) հսկայական մասսի մասեր, առանձին տեսակի թղկենի (կլոռն), խուրմա, թղենի, բլուր, յերկաթափակալի, մետաքսյա ակացիայի տունկերի անտառային շրջաններ և, վերջապես, փշատերև անտառների ամբողջ մասսի մասեր։

Անդրկովկասի անտառների ընդհանուր տրաբածությունն ավելի լի և միլիոն հեկտարից, վոր կազմում ե նրա ամրող տարածության 23 տոկոսը։ Ամենից ավելի անտառապատ և Արեմտյան Անդրկովկասը, մասնավանդ Արխագիան ու Աջարստանը (52—53 տոկոս). գգալիորեն պակաս անտառապատ և Արևելյան Անդրկովկասը, դրանից ավելի աղքատ և իր անտառներով Աղբբեջանի արևմտյան մասը։ անտառներով չափազանց աղքատ և Հայաստանը և անտառներից բոլորովին զուրկ և արևելյան Աղբբեջանի դաշտային մասը։

Անդրկովկասի բնական գլխավոր հարստությունների թվի մեջ պետք և հաշվել նաև նրա լեռնային բազմաթիվ դետերի ու լճերի պարունակած ջրային ռեսուրսները։ Ուժային կոնկրետ հաստարանների (установка) գործնական ոգտագործման համար լիովին հուսալիք և տնտեսական տեսակետից նպատակահարմար ջրային եներգիայի պաշարը կարելի լի հաշվել 3 միլիոն ձիում, տարեկան մշտական կարողությամբ։

Կարենորագույն հանքանյութը նավթն եւ նրա պաշարը հավասար է 1,475 միլիոն տոննի, վոր կազմում և Միության

պաշարի 51 տոկոսը և համաշխարհակին պաշարի մոտ 20 տոկոսը՝ Նավթի շահագործության արդյունաբերական հանուլթը կենտրոնացած և Ազգերոնի թիրակղու վրա, վորը 1913 թ. տվեց ԽՍՀՄ մեջ ստացված ամրող նավթի 82 տոկոսը, իսկ 1925—26 թվին՝ 67 տոկոսը:

Բացի դրանից, նավթի բնավայրեր կան նաև Սալան—Շիրվանի շրջանում, նավթի բնավայրեր կան նույնպես Կախեթիայում, վորտեղ նավթը շատրվան և խփել 540 մետր խորության վրա՝ Հետո, նավթ կտ ելդարի ու Շիրակի տափաստաններում և մանավանդ Գուրիայում: Իր վրա ուշադրություն և դարձնում նաև Խուսակ կայարանի մոտ լեռեացած նավթը:

Ներկալում քարածուխը լիովին հետախուզված ու հարսնի Արևմագան Վրաստանի յերկու կետում Տկվարչելիում՝ Գալեղդի շղետի վրա և Տկվիրուլում:

Տկվարչելու ածխահանքի պաշարը գեռ չի վորոշված, բայց մոտավոր հաշվով նրա քանակը համարվում է 115 միլիոն տոնն. այդ քարածուխը տալիս է լավ կորս, և նրա միջի ծծումը քիչ է:

Տկվիրուլու քարածուխը, վորի պաշարը, նույնպես մոտավոր հաշվով, համարվում է 83 միլիոն տոնն, միջընկա տեղ և բռնում քարածի և գորշ-կարմրավուն քարածի միջն ու աչքի յի ընկնում իր պարունակած ցնդիկ (լեւուշ) նկութերի մեծ քանակով, մեծ մոխրականությամբ և ծծմբի զգալի քանակությամբ: Այդ կարգի քարածի խին և պատկանում նաև Հերաթի քարածի բնավայրը՝ Քութայիս քաղաքի մոտ:

Քարածի հետ միասին Անգրիկերացիայի ընդերքներում կան մաղնիսալին լերկաթաքարի պաշարներ: Ամենից ավելի հայտնի լին Դաշտիանի շրջանում (Ազրբյան) գտնվող ընավայրերը վորոնց քանակը, մոտավոր հաշվով, վորոշվում է 175 միլիոն տոնն, քարձը տեսակի, և պարունակում են 55-ից մինչև 69 տոկոս յերկաթ:

Սև ծովի համարքա ամրող ափի յերկարությամբ ձգվում են հանքահանածոներ (շիլի), վոր պարունակում են բավական առաջ յերկաթ:

Ա.ՍՅելէ աչքի լի ընկնում նույնպես չափազանց հարուստ մանղանի հանքերով, վորոնք գտնվում են Արևմայան Վրաստանում—Շիտթուրում: Շիտթուրի հանքերը պատերազմից առաջ տալիս եյին Խուսաստանում ստացվող ամրող մանղանի 75 տոկոսը Խուսաստանը 1912 թվին տռաջին տեղն եր բռնում ման-

գանի հանքահանման գործում մի շարք ալլերկրների մեջ Բացի միաթուրի հանքերից մանգանի բնավայրեր կան նաև Աղբյուջանում—Գյանջալի գավառում, Մոլլա-Զալի ույսոնում և Վրաստանում, Անդրկովկասյան լերկաթուղիների Աջամեթի կայարանից վոչ հեռու:

Պղնձի բավական հարուստ հանքեր կան Խորհրդային Հայաստանում (Զանգեզուրի, Ալլահվերդու շրջանները) և Խորհրդային Աղբյուջանում (Գետաբեկի ու Բելոկանի շրջաններում): Պղնձի ընդհանուր պաշարը լենթաղրաբար կազմում և Համամիութենական պղնձի 25 տոկոսը, Պատերազմից առաջ ԱՍՖԽՀ տակսի եր Ռուսաստանում ձուլվող ամբողջ պղնձի մինչև 30 տոկ.

Մոլուս գունավոր մետաղներից առանձնապես հետաքրքրական են ալլունիտի պաշարները, Զագլիկ գյուղի մոտ, վորոնց քանակը հաշվվում է 150 միլիոն տոնն. լատիրիտի ձևով ալլունինի հանքեր են պատահում և Արևելյան Վրաստանում. արճիճ և ցինկ պատահում են շատ տեղերում, մանավանդ պղնձահանքերում: Մասնավորապես ցինկի փաթթթի բաղմաթիվ յերակներ են գտնվում Մեխմանի ույսոնում (Լեռնացին Ղարաբաղ), արճիճ՝ Գյումիշլիխի (Խորհրդային Նախիջևանում) բնավայրում, վորոնց արժանի յեն ամենալուրջ ուշագրություն:

Կան գունավոր մետաղների բաղմաթիվ բնավայրեր, վորոնք պահանջում են հետախուզական աշխատանքներ՝ պղնձի վերաբերմամբ Ռաչալի, Թիֆլիսի ու Գյանջալի գավառներում, Լեռնացին ինքնավար Ղարաբաղի շրջանում, և Հայաստանի Դիլիջանի, Ղարաքիլսասի, Մեղրու ու Յերևանի շրջաններում, ցինկից արծաթի, արճիճի ու անաղի վերաբերմամբ Հարավ-Ռութիայում, Արքայի Մասնավայրում, Վրաստանի Լեշխումի ու Ռաչայի գավառներում, Աղբյուջանի Ղաղախի գավառում, Հայաստանի Դարբադապաղի, Դիլիջանի և Լոռի-Փամբակի գավառներում:

ԱՍՖԽՀ ընդերքներում գտնվում են զգալի քանակությամբ հանածո և վոչ հանածո մենարալային հարստություններ, վորոնք ընկած են հանրապետությունների ամբողջ տերրիտորիայի մեջ: Ծծմբալին հրաքար (կոչեղան) պատահում և Անդրկովկասյան պղնձահանքերում և կենտրոնանում և Զբաղիձորի ծծմբահրաքարային հանքաշերտերում, Կրաքար ստացվում և Զագլիկ գյուղում, վորիբնավայրնիր հատկությամբ միակն ե ԽՍՀՄ մեջ: Բարիտ պատահում և թե Վրաստանում և թե Աղբյուջանում և կազմում է 1925—26 թվին Միության մեջ հանգած ամբողջ բարիտի

60 տոկոսը։ Առանձնապես հետաքրքրական ե ինֆուզորիտը. վորն ունի արտածային (եքսպրոտային) խոշոր նշանակություն, և ֆլուրիզինը, վոր լուրջ հետաքրքրություն և ներկայացնում նավթարդունաբերության համար։

Ալստեղ մենք ունենք նաև ծծմբուին հրաքար, գլաուքերի աղ, ուլտրամարին և այլն։

Ա.Ս.Ֆելչ առանձնապես հարուստ ե լիոնալին ծաղում ունեցող հանքային շինանլութերով։ Չափազանց հետաքրքրական շինանլութիւնութիւնը մոտի հանքեր կան Ալաղիազ սարի լանջերին, Արթիկ գլուզի մոտ։ Եինանլութիւնը բացառիկ հատկությունը աչքի ընկնող տուփի հանքաշերտի ծավալն առաջման վորոշված և 200 միլիոն խոր. մետր։ Տուփի զանգվածի տեսակարար կշիռը—2,50—ծագալի ծանրությամբ մոտեցնում և տուփը փալտի ամուր տեսակներին և նրան համարլա լերկու անգամ ավելի թեթև և զարձնում աղլուսից։

Տուփի հետ միասին պետք ե նշել պեմզան, վոր նույնպես միանդամայն բացառիկ հետանկարներ ունի շինարարական դործի մեջ, դրանիւսը, բազալտը, զանազան մարմարները, կրաքարը, պիտամիտը, ծածկի թիթեղաքարը (սլանեց), զանը, զիպսը և ալյն, ինչպես ցիմենտի տեսակները, որինակ՝ փխրաքարը (տրաս), պուցուանը, հրանեստ կավը և ալյն։

Ա.Ս.Ֆելչ հետան ելեկտրոներզիտան և բնական ռեսուրսները հնարավորություն են տալիս զարգացնելու նրանում ամենալայն չափերով քիմիական արդյունաբերությունը։

Ցեզ, վերջապես, Ա.Ս.Ֆելչ բնական ամենաարժեքավոր հարստությունների թվում պետք ե հաշվել նրա կլիմալական բացառիկ բազմապիսի տվյալները, վորոնք հնարավորություն են տալիս լայն կերպով զարգացնելու նրանում արժեքավոր հատուկ մշակույթներ (բամբակի, ծխախոտ, թեյ, մերձարևազարձալին մշակույթներ) և բարենպատ պայմաններ են ստեղծում կենդանաբուծության զարգացման համար, վորը (կենդանաբուծությունը) չափազանց արժեքավոր արտադրանք և տալիս շերամապահության, անասնաբուծության զծով և այլն։

4. ԱՍՖԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մինչեղափոխական տարիներին Ա.Ս.Ֆելչ արդյունաբերության զարգացումը չափազանց ճնշված եր զարգութակին քաղաքականությամբ, վոր կիրառվում եր աղգալին բոլոր ծալրագա-

վառների վերաբերմամբ: Ալդ պատճառով ոգտակար հանածոների բազմաթիվ ու բազմատեսակ բնավարերից արդյունաբերական մշակման եյին յենթարկվում գլխավորապես նավթն ու մանղանը, վորոնք ստացել են վոչ միայն միութենական, այլև համաշխարհային նշանակություն, և ալդ այն ժամանակ, իբր կային հսկալական քանակությամբ պաշարներ ու հնարավորություններ տնտեսական հումուրյթի ասպարիզում, կային հսկալական եներգիատու ուսուուրաներ, ինչպես, որինակ՝ նավթը, քարածուխն ու ջրային եներգիան:

Բացի դրանից, համեմատաբար բավական զարգացել ելին արդյունաբերության պղնձի և բամբակազտման ճյուղերը:

Նութամշակ (օքրաբատայեայա) արդյունաբերությունն համարուա գոյություն չուներ, և Անդրկովկասի արդյունաբերական արտադրանքի տեսակաբար կշիռը Ռուսաստանի ընդհանուր տնտեսության մեջ անշեղ ընկնում եր:

Խորհրդայնացումից հետո միայն Անդրկովկասն ստանում է տնտեսական զարգացման լայն հնարավորություններ:

Արդեն 1924—25 թվի սկզբին անդրկովկասայն արդյունաբերությունը մի շաբաթ ճյուղերում (անտառային, ցեմենտի, աղի արդյունաբերություն և ալյն) անցնում և արտադրության մինչպատերազմական չափերից:

Անդրկովկասյան արդյունաբերության զարգացման ուղիները հասկանալու համար սուանձնապես կարենոր և նշել, վոր ԱՄՖԽՀ մեջ ավելի չափով, քան ԽՍՀՄ մեջ ամլոզովին, արդյունաբերության վերականգնման պրոցեսը խառնահարություն ունենալու հերակառուցման պրոցեսի հետ:

1923—24 թվի արդյունաբերության կացության հետազոտությունը, կատարված 1925 թվին, լերևան հանեց, վոր արդեն այն ժամանակ արդյունաբերական ձեռնարկությունների 18 տոկոսը հիմնված և յեղել Անդրկովկասի խորհրդայնացումից հետո:

Հիմնականում արդյունաբերության վերականգնման շրջանն ավարտվեց 1925—26 թվին, և այնուհետև արդյունաբերության շինարարությունը տեղի ունի միաժամանակ նրա վերասարքավորման հետ աեխմիկական նոր բազայի հիման վրա և փոփոխելով նրա ստրուկտուրան:

Վերականգնման պրոցեսի հետեւանքները Անդրկովկասի արդյունաբերության ամենազլխավոր ճյուղերում (առանց նավթի) ընորոշվում են հետեւալ թվերով (տես աղյուսակ № 1).

ԱՍՏԻՇ արդյունաբերության արտադրանքը (1913 թ. գնելու համապատակաց) (1913 թ. գնելու համապատակաց)

Աշուածավարելության ձևողեր	1913 թ.		1923-24 թ.		1927-28 թ.		1928-29 թ.	
	կարգաբանի պամապատճեն	պամապատճենի (ինք)	կարգաբանի պամապատճեն	պամապատճենի (ինք)	կարգաբանի պամապատճեն	պամապատճենի (ինք)	կարգաբանի պամապատճեն	պամապատճենի (ինք)
Ա. Ցեղանակի պամապատճեն	264	1.29	401	146.4	1.389	526.1	2.340	8.24
Պամապատճենի պամապատճեն	1.124	5.46	-	-	1.114	90.7	1.789	886.3
Պամապատճենի պամապատճեն	6.488	31.54	331	5.1	2.733	42.1	3.197	6.35
Պամապատճենի պամապատճեն	1.588	7.72	312	24.7	4.146	261.1	5.444	169.2
Պամապատճենի պամապատճեն	7.593	36.91	1.170	15.4	1.349	17.8	1.592	11.33
Մարգարագործականի պամապատճենի պամապատճեն	2.415	11.74	713	29.5	4.386	181.1	6.972	49.3
Պամապատճենի պամապատճեն	316	1.54	1.364	431.6	3.152	997.5	4.901	17.2
Առաջնական պամապատճենի պամապատճեն	407	1.98	119	29.2	1.256	308.5	1.530	5.6
Բարձրագործականի պամապատճենի պամապատճեն	377	1.83	345	91.5	516	591	691	2.1
Հանդանության պամապատճենի պամապատճեն	20.572	100.0	1.835	23.5	20.044	97.4	28.416	156.8
Բ. Մարմարականի պամապատճենի պամապատճեն	5.924	6.92	3.852	65.0	12.963	218.8	15.115	100.0
Համապատճենի պամապատճենի պամապատճեն	168	1.81	14	8.3	3.169	1.8863	3.418	138.1
Բանականի պամապատճենի պամապատճեն	3.176	94.27	1.383	43.5	5.745	180.9	13.365	45.8
Հանդանության պամապատճենի պամապատճեն	9.268	100.0	5.249	56.6	21.877	236.0	33.574	21.0
Հանդանության պամապատճենի պամապատճեն	29.840	-	10.084	-	41.921	-	61.390	-
Առ Հանդանության պամապատճենի պամապատճեն	68.9	-	47.9	-	47.8	-	-	-

Արդյունաբերության ձևուղերի մեծ մասը վազուց արգեն իր յետին և թողել արտադրության մինչպատերազմական մա-

կարդակը, բացառությամբ պղնձի ձուլման և մանգանի արդյունաբերության,

Աղյուսակ № 1-ի հետագա վերլուծությունը ցույց է տալիս, վոր ԱՍՖԽՀ մեջ մաքսիմալ կուրսը վերցված և արդյունաբերության համար տեղական գյուղատնտեսական հումուլթի բազան ոգտագործելու ուղղությամբ, բայց դրան զուղընթաց՝ դանդաղացել և լեռնալին և լեռնագործարանալին արդյունաբերության զարգացման տեմպը։ Դա բավական պակասեցնում է արդյունաբերության այն ճյուղերի տեսակարար կշիռը, վորոնք գլխավորապես պատրաստում են արտադրության միջոցներ. այդ ճյուղերը 1923-24 թվին տալիս ելին արդյունաբերական ընդհանուր արտադրանքի միայն 48 տոկոսը՝ 1913 թվի 68,9 տոկոսի փոխարեն, իսկ 1927-28 թվին՝ 47 տոկ. և 1928-29 թվին՝ 45,8 տոկոս։ Վերջապես, մեր ընթաց տվյալներն ապացուց են տեքստիլ արդյունաբերության նշանակության սուր բարձրացման, արդյունաբերության, վոր 1928-29 թվին իր արտադրանքի տեսակարար կշռով արդյունաբերական արտադրանքի ընդհանուր մասսալի մեջ հասնում և 31 տոկոսի՝ 1913 թվի 18 տոկոսի հանդիպ:

Թիեմ արդյունաբերության այդ արագ աճը հանդիսանում է ԱՍՖԽՀ ինդուստրիացման գլխավոր բաղայի—լեռնալին և լեռնագործարանային արդյունաբերության չափազանց թույլ զարգացման ցուցանիշը։ Մանգանի արդյունաբերությունը, պղնձի, քարածիի, յերկաթի և այլն արդյունաբերությունը (բացառությամբ նավթարդյունաբերության) սինչեւ այսոր հարկավոր չափով չեն զարգացել, և նրանց գերը ԱՍՖԽՀ ժողովրդական տընտեսության մեջ առաջմմ չնշին եւ։

ԱՍՖԽՀ ինդուստրիացման բուռն աճումը հնարավոր զարձավ միայն շնորհիվ հիմնական այն խոշոր ծախսերի, վորոնք արվեցին նոր ձեռնարկներ կազմակերպելու վրա։ Վերջին չորս տարով անթացքում արդյունաբերության մեջ դրված կապիտալ ներդրումների զինամիկան բնորոշվում է, համաձայն Անդրադատանի տվյալների, հետեւյալ թվերով (աղյուսակ № 2) (հաղար ուրբիներով),

ԱԴՅՈՒԱՆԱԿ Հ 2

1925-26 թ.	20,072	100%	97,989	100%
1926-27 թ.	24,558	123,3%	122,991	125,5%
1927-28 թ.	45,865	228,5%	158,270	161,5%
1928-29 թ.	52,558	261,8%	190,988	194,8%
Ընդամենը	156,053 (առ նավթի)		570,188 (նավթի հետ)	

Այսպիսով, կազիտաւ ներգրումները տարեցտարի ավելանում են և 1928-29 թվին հասնում են 52,558 հազար սուրլու (161,8 տոկոսով ավելի), քան 1925-26 թվին՝ առանց նավթի, և 94,8 տոկոսով ավելի՝ նավթի հետ)։

Արդյունաբերության վերականգնման ու վերակառուցման և հիմնական խոշոր ներգրումներին զուղընթաց՝ ավելանում և նաև աճրող արդյունաբերության հիմնական փոնդը, վոր ցուց և արված և 3 ազլուսակում։

ԱԴՅՈՒԱՆԱԿ Հ 3

Արդյունաբերության հիմնական փոնդերը (հազ. սուր.՝ ոլ)

Տ Ա. Բ Ե Թ Գ Ե Բ Բ Բ	Ցենզային ասրողջ արդյունաբերությունը (առանց նավթի)	Ցենզային ամրողջ արդյունական նավթի հետ)	Գումարը (հազ. սուր.)	Ա ճ ը	Ա ճ ը
	(% 0 % ոլ)	(հազ. սուր.)		(% 0 % ոլ)	(% 0 % ոլ)
Առ 1-ն հոկտ. 1925 թվի	78,093	100,0	491,001	100,0	
» » » 1926 »	106,828	122,7	541,288	110,2	
» » » 1927 »	125,680	144,3	604,176	123,0	
» » » 1928 »	170,873	196,2	689,785	140,5	

1929 թվին ցենզային արդյունաբերության (առանց նավթի) հիմնական փոնդն ավելացել և 1925 թվի համեմատությամբ 96,2 տոկոսով կամ 83,780 հազար սուրլով խել ներտանելով նաև նավթը—40,5 տոկոսով կամ 198,784 հազ. սուրլով։

Գումար զուղանառնեառնելանը, կարելի յէ վստահ ասել, թե աշխարհում զժվար թե վորեն տեղ կան այնպիսի շրջաններ, վո-

ըոնք կարողանան համեմատվել Անդրկովկասի հետ՝ իրենց աշխարհագրական, հողի և կլիմայական չափազանց բազմապիսի պայմաններով։ Համեմատարար փոքր տարածության վրա (185, 457 քառ. կիլոմետր) աճում են բամբակ, թեր, ծխախոտ, խաղող, մանդարին, լիմոն, ցորեն, յեգիպտացորեն, ըրինձ, կենափ, քունջութ, շաքարածակնդեղ. բնակչությունը պահում է խոչոր յեղջուրավոր անասուն, վոչխար, պարապում է շերամապահությամբ, թոչնաբուծությամբ, մեղվարուծությամբ և այլն։

Անդրկովկասի գերիշխող լեռնալին բնույթը, նրա ծայրահեղ կտրտուկությունը կովկասյան գլխավոր և մանր լիռնաշըղթաներով, վորոնք իրենց ճյուղերով Անդրկովկասը բաժանում են մի շարք լեռնալին պլատոնների, հովիտների ու ձորերի, մի կողմից՝ Սև ծովի ազդեցությունը, մյուս կողմից՝ Կասպից ծով և յերրորդ կողմից՝ կասպյան հարթավայրերի չոր անապատների ազդեցությունը ստեղծում են կլիմալի ու հողի ծայրահեղ բազմապիսություն։ Կլիման սաստիկ փոխում է իր բնույթը վահայն հարթավայրերում, Կասպից ծովի ափերից դեպի Սև ծովի ափերի ուղղությամբ, այլև ուղղահայացի ուղղությամբ՝ չոր և խոնավ մերձարևադաշտին ռայոնների դաշտային գոտուց դեպի հավիտենական ձուռների գիծը։ Սև ծովի և Կասպիականի (Լենքորան) ջերմությամբ ու խոնավությամբ կովկասյան ծովափերը բարենպաստ պայմաններ են ստեղծում մերձարևադաշտային մշակույթների զարգացման համար (թեր, ըրինձ, մանգարին, բամբակ, ծխախոտ)։ Ալազանի հովիտն իր միջնօրկրածովային կլիմալույ լավագույն մի շրջան և հանդիսանում խաղողի մշակությամբ զբաղվելու համար։

Ազրբեջանի հարթավայրում և Յերևանի հովտում, ցամաքային չոր կլիմալով, շոգ ու չերաշտալին ամառով, վոր անհնարին և դարձնում ջրովի անտեսությունը, զարգացած և բամբակադործությունը, խաղողագործությունը և արգելությունը։

Ծովի մակարդակից ունեցած իր բարձրությամբ Անդրկովկասը սովորաբար բաժանվում և լերեք գոտու—հարթավայրեր, լեռնաստան և նախալինաստան։ Հարթավայրերում և կենարունացած դյուղացիական բոլոր տնտեսությունների 49 տոկոսը կամ վրացիան ամբողջ բնակչության 47 տոկոսը, մշակվող ամբողջ տարածության 48 տոկոսը, ցանքի ամբողջ տարածության 52 տոկոսը, ամբողջ բամբակի 87 տոկոսը, ամբողջ ծխախոտի 93 տոկոսը, ամբողջ բանջարանոցների ու բոստանների 52 տո-

կոսը, խաղողի բոլոր արգիների եւ տոկոսը, ծառապտղի այգիների 46 տոկոսը, խոշոր լեզջուրավոր ամբողջ անասունի 43 տոկոսը: Ա.Ա.ՀՀ հարթավայրերը ունենալով արդյունաբերական խոշոր կենտրոններ, խաչատվելով խճուղիներով, յերկաթուղիներով ու գետնուղիներով (грунтовые дороги) և ունենալով բարձը աղբանքային տեխնիկական ու արժեքավոր բուլսերի կուլտուրա,—զարգանում են չափավոր արագ, քան նախալեռնաստանը: Իսկ նախալեռնաստանը, վորանդ տարվում է հացահատիկային սպառողական տնտեսություն, ավելի մատչելի լին տնտեսական և կուլտուրական ներդրման, քան բացարձակապես ուղղվուրելու անտեսական կենտրոններից կտրված յետամեաց լեռնաստանը, վորանդ չափաղանց կարեոր խնդիր և հանդիսանում անիմուղիների և նույնիսկ լավ զբաստային շավիղների շինարարությունը:

Անզրկովիասի լենային բնույթի և կլիմալական պարմանների հետևանքով սահղօվում և անպետք հողերի (ամրոցջ հողի 18,3 տոկոս), ամառային ու ձմեռային արոտափեղիների (18,6%) դլուզամերձ արոտների (Վագոնի—17,5 տոկ.) և տնտառների (23 տ.) բավական ընդարձակ տարածությունն Հողի կարևորագույն մասը—վարելահողը—կազմում է ընդամենը 3,547 հազ. հա (հեկտար), կամ ամրոցջ հողի 19 տոկոսը. վորք փառագրեն ողոտագործվում և միայն 60 տակոսվ տալով 2,133 հազ. հա ցանքի տարածություն (1927 թվին):

Գյուղատնահնության եկոնոմիկայի համար ամենից ավելի
մեծ նշանակություն ունեն ջրովի հողամասերը, սակայն, գե-
տերում բավարար քանակությամբ ջուր չկիսելու պատճառով,
փաստորին ջրովի տարածությունը (763 հազ. հա) կազմում
է ջրովի ամբողջ տարածության (1,263 հազար. հա) միայն 60
տոկոսը:

Հիշյալ հանգամանքների հետևանքով՝ Ա.Ս.Թիմէ, տռանձին շըրշաններում, լերկրագործության ընդհանուր յիտամենացության և ցածր ակիմնելիքայի օպարաններում, ստեղծվել ե ազրարային գերազականություն (սակավահողություն, բերանականություն, բարձրացած անջրդի տարածություններն ու պատրաստված են միայն բազմաթիվ գործառնությունների կողմէց վորացեն ձմեռալին և ամսապահն արտադրեն)։

Ա.Սահմէնէ մէջ ընական պայմանների նույն առանձնահատկությունները և շատկայական հարաբերությունների թույլ գարզա-

ցումը վորոշում են գլուղատնտեսության ծայրահեղ բազմազան տեխնիկական մակարդակը. այդ տնտեսության մեջ բարձր ապրանքավիճակն, ինտենսիվ, աշխատաշատ (պրոցես), արդյունաբերական, թանգարժեք, ինչպես և այդու և բանջարանոցային մըշակութներին զուգընթաց՝ գոյություն ունի կիսաբնատնտեսական, նահապետական, գրեթե ամբողջությամբ սպառողական հացանատիկալին տնտեսություն և պրիմիտիվ քոչվորային (վաչկատուն) անասնապահություն:

Անդրկովկասի գլուղատնտեսական բնակչության հողապահովվածությունը շատ ցածր է: Այսպես, որինակ՝ գլուղական բընակչության ամեն մի շնչին ընկնում են վարելահողեր և տնկարաններ՝ Անդրկովկասում — 1,15 հա, Հայաստանում — 0,85 հա, Վրաստանում — 0,63 հա, իսկ ԱՄֆիշ մեջ — միջին հաշվով՝ 0.85 հա:

Զանազան մշակույթներ անհամուչափ են դասավորված Անդրկովկասի տերրիտորիայում և կենտրոնացած են առանձին շրջաններում. այդ բանում արտահայտվում է ԱՄֆիշ կլիմայի բազմազանությունը և նրանում ցայտուն կերպով արտահայտված ուղղաձիգ գոտիականությունը (չօհալիությունը)։

Այսպես, որինակ՝ Արևմտյան Վրաստանում կենտրոնացած և անդրկովկասյան ամբողջ լեզվապատացորենի 80 տոկոսը. նա այն տեղ գրավում և ցանքի ամբողջ տարածության 90 տոկոսը: Ցուրենն ու գարին Աղբբեշանում գրավում են ցանքերի տարածության 82 տոկոսը, իսկ Հայաստանում — 85 տոկոսը:

Աշնանացանը գներիշխում և Աղբբեշանում, իսկ գարնանացանը՝ Հայաստանում Մխախոտի ցանքերի 77 տոկոսը կենտրոնացած և Սև ծովի մերձափնյա գոտում — Արխազիալի Ալիշ մեջ՝ Բրնձի համարյա ամբողջ ցանքը կենտրոնացած և Աղբբեշանում՝ Բամբակի, ծխախոտի, բընձի պես մշակութներն աճում են միայն հարթավայրերում, բացառությամբ Յերեանի հովտի, վորտեղ, չնայած բարձր մակերեսութիւն (900 մետր բարձր ծովի մակերեսութից), հաջողությամբ աճում և բամբակը, շնորհիվ կլիմայական առանձին հատուկ պայմանների: Արդյունաբերական խաղողագործությունը կենտրոնացած և Վրաստանում — Կախիթիալի շրջանում, Աղբբեշանում — Դյանջալի շրջանում և Հայաստանում — Յերեանի շրջանում: Արդյունաբերական ծառապտղի այգեգործությունը զարգացած և Վրաստանում — Գորու գավառում, Արխազիալում և Աջարստանում, Աղբբեշանում — Կուրայի շրջանում և Հայաստանում — առանձին շրջաններում:

Ա.Ա.Ցենչ հատիկային անտեսությունը կրում է գլխավորապես սպառողական բնույթը։ Հանդիսանալով զերիշխող մշակույթ Անդրկովկասի գաշտավարության մեջ, բռնելով ցանքի ամրող տարածության մոտ 90 տոկոսը և կաղմելով բուսաբուծության ընդհանուր ամրող արտադրանքի 31 տոկոսը, — հատիկացին անտեսությունն ունի չնչին ապրանքային մոտ 2 տոկ.։) և ցածր բերքագությունն (միջին հաշվով՝ Ա.Ա.Ցենչ մեջ 1 նա աշնանացան ցորենը տալիս և 7,9 ցենտ., գարնանացանը՝ 6,4 ցենտ., աշնանացան գարին — 8,5 ցենտ., ինչիպահացորենը — 8,9 ցենտ.)։ Հացահատիկային մշակույթների ապրանքալին մասսան իր արժեքային արտահանատությամբ կազմում եր (1927-28 թվին) գլուղանտեսության ապրանքային ամրող մասսալի 2,7 տոկոսը միայն։

Արտադրած հացը չի բավարարում բնակչության կարիքները. հացախարային (հացաֆուրամալին) զեփիցիալ վերջին տարիների ընթացքում, միջին հաշվով, կազմում է մոտ 400,000 տոնն և լրացվում է Միությունից ներածվողով։ Ներածվող հացը պատերազմից առաջ կազմում եր 2,5—3,0 միլիոն ցենտներ։

Ա.Ա.Ցենչ մազովրդական անտեսության ընդհանուր ամրող արտադրանքը (ներառյալ շինարարությունը և արանսալորտը) 1927-28 թվին կազմում եր 1,639 միլիոն սուրբի, ալիսինքն՝ աղցարնակության մի շնչին գալիս եր 275 սուրբի։ Հիշալ գումարից զբուղանակության բաժինը կազմում է 42 տոկոս (բուսաբուծություն — 29 տոկոս, այդ թվում՝ հացահատիկները 14 տոկոս և անինոնիկական մշտկույթները — 2,4 տոկոս, կենդանաբուծությունը — 11 տոկ.։)։ Առաջման չնչին զեր և խաղում անտեսությունը, վոր կազմում է ընդամենք 1,6 տոկոս։

Ա.Ա.Ցենչ մեջ զյուղացիական անտեսությունների 39 տոկոսը բոլորովին չտնի բանող անտառուն, իսկ 36 տոկոսն ունի միացն մինչև 1-ական միավոր։ Այսպիսով Անդրկովկասում հոգերի ծանրության և զբա հետևանքով լծվածքի չափերի պայմաններում (միջին հաշվով՝ 4-ից 8 գույզ ինչող) անտեսությունների միայն չնչին մասն և ապահոված իր քարչող ուժով։

Ինվենտարագուրկ անտեսությունների քանակը կազմում է մոտ 44 տոկոս։ Աճում եր զյուղացիական անտեսությունների բաժան-բաժան լինելու պրոցեսոր. 1913 թվին յեղած 800,000 արևտեսությունների թիվը հասած է յեղել առ 1-ն հունվարի 1929 թվի 918,000-ի։

Ինչ վերաբերում է զյուղանակության կողեկանիցամա-

նը, պետք ե ասել, վոր ԱՍՖԻՆ՝ մեջ հնդամլակի սկզբում կար 52 խորհանտեսություն, վորից գաշտավարական—6, խաղողագործական—19, պտղաբաւծական—5, մերձարկառադարձային մշակուլթեների—14 և կենդանաբուծական—8: Բացի դրանից, կտր չտրեստացված 4 խորհանտեսություն՝ թելի 2 («Զայ Գրուղիա» ընկերություն), սերմատնատեսության—1 («Կարաչալա-Զակլալուկոմ») և կենաֆի սերմատնատեսության—1 («Կենաֆ» ընկերություն): Ցանքի տարածությունը—1927 թվին 2,700 հա, 1929 թվին՝ 4,750 հա:

Վերջին տարիների ընթացքում կոլտնտեսությունների դրությունը բնորոշվում է հետևյալ թվերով (աղյուսակ № 4):

ԱԴՅՈՒԽԱԿ № 4

	Առ 1-ն հոկտ. 1926 թ.	Առ 1-ն հոկտ. 1927 թ.	Առ 1-ն հոկտ. 1928 թ.	Առ 1-ն հոկտեմ. 1929 թ.
Կոլտնտեսությունների քանակը	52	136	697	1,165
Տնտեսությունների թիվը	620	2,000	12,990	33,300
0% ո-ով առ գյուղացիական անահօս, բնակ. թիվը	0.06	0.23	1.4	3.6

Գյուղատնտեսական կոռպերացիան ձևակերպվել է միայն 1924 թվին: Նա համախմբում եր իր մեջ 330 գյուղատնտեսական ընկերություններ՝ 279,2 հազ. անտեսություններով և 265 հատուկ ընկերություններ՝ 94,7 հազ. անտեսություններով:

Կոնտրակտացիան սկսում է լայն կերպով արմատանալ: Անդը կովկասի գյուղատնտեսության մեջ, հետջնետե ընդդրկելով նաև այնպիսի ծանր-ապրանքային ճյուղ, ինչպիսին հացահատիկայինն եւ:

Հացահատիկների կոնտրակտացման տարածությունը կազմում է՝ աշնանացան 1928 թվին—25,000 հա, գարնանացան 1929 թվին—40,000 հա և աշնանացան 1929 թվին—50,000 հա:

Տեխնիկական ամենակարենոր մշակությները (բամբակ և ծխախոտ) գրեթե 100 տոկոսով լինթարկվել են կոնտրակտացման:

1927-28 թվին կոնտրակտացման 11 միլիոն ոռուբլի ընդհանուր գումարը հասել է 26 միլիոն ոռուբլու 1928-29 թվին:

Անդրկովկասն իր ունեցած գյուղատնտեսական մեքենանե-

ըի քանակով Միության ամենաաղքատ շրջանն է յեղել: Միության մրսւ չը ջանների և կապիտալիստական լերկոների համեմատությամբ՝ նա առաջն և հետեւալ ուստկերը:

Կուլտուրական գյուղատնտեսական ինվենտարի ու տրակտորների մեջ յեղած կտպիտաւը.

1 հա ցանքի տարածությանը

Ա.ԱՅԵԼՀ	2 ա. 74 կոտ.
Բ.ԱՅԵԼՀ	7 ա 40 ա
Բ.Ա.Հ	8 ա 80 ա
ՈՒ.Ս.Հ	18 ա 20 ա
Հ.Ա.Մ.Ն (Հյուս. Ամեր. Խ. Ն.)	33 ա 87 ա
Դ.Ի.Ռ.Մ.Ն.Ի.Մ	80 ա 85 ա
Կ.Ա.Հ.Մ	9 ա 50 ա

1928-29 թվի սկզբին Անդրկովկասում կար 980 տրակտոր վորի մեծ մասը (72 տոկ.) մարդզո՞նի սիստեմի, 1929-30 թվին թերժած և ևս 455 տրակտոր:

Տրակտորների եֆիկտիվությունը (արգասավորությունը) բավարար չեն Այն հանգամանքը, վոր տրակտորները մասսամբ չեն համապատասխանում Անդրկովկասի հողի պայմաններին, վոր չկան բավարար քանակությամբ նորողիչ արհեստանոցներ և փորձված տրակտորիստներ, պատճառ և հանգիսանուու տրակտորների վաշ բավարար ոգտագործմանը: Յեղած տվյալներով, տրակտորների տրավագրականությունը Անդրկովկասում ներկայումս ամեն մի սեղսնում չի անցնում 65 հաից (հեկտ.):

Անդրկովկասի գյուղատնտեսությունը ինդուստրիալիզման և քենթարկված յեղել չափազանց թուլլ կերպով:

Եյտական հաջողություններ չեն յեղել գյուղական հեկտարի իշխացիա ասպարիզում: Ելեկտրաշինարարությունը մեծ մասամբ կատարվում եր ասանց պլանի և առանց կապակցվելու գյուղատնտեսական ինդուստրիալիզմի հետ, ելեկտրահաստումների եներդիան համարյա ամբողջությամբ հատկացվում եր կենցաղային, լուսավորման նպատակների համար: Բացի զբանից, վորպիս ընդհանուր կանոն, այս կալաններն սպասարկում եյին գյուղական ազգաբնակությունը մասամբ միայն, այդ պատճառով, իսկն ասած, նրանք չեն կարող համարվել գույտ գյուղական ելեկտրակայաններ:

Անդրկովկասում կային մոտ 37 ելեկտրակայան, վորոնց

ընդհանուր կարողությունը հավասար եր մոտ 1,154 կվտ-ի: Այս կայաններից 4-ը ջրաելեկտրակալաններ ենին, իսկ մնացածները — ջերմալին:

Ծխախոտի արդյունաբերության ասպարիզում ծրագրվում են ուժեղացնել ծխախոտի վերամշակումը տեղայի, ընդարձակել վաճառքի շուկան, սինդիկատի վերանցնել ծխախոտի ձեռնարկությունները, ինչպես նաև կենսաբուհացնել ծխախոտի հումուզի մշակումն ավելի հզոր զործարաններում։ Հիմնական ներդրումներ նախատեսված են 29,8 միլ. ռուբլու ծավալով։ ընդհանուր արտադրանքը կազի 44,2 միլիոն ռուբլուց մինչև 93 միլիոն։

Ա.Աթիշը ընական սեսսուրաները հնարա-
վորություն ևն տալիս շահարերորեն
կազմակերպելու թեթե արդյունարերու-
թյան մի շարք նոր ձևանարկություններ։ Պլանը ծրագրում է
կազմակերպել շաբարի արդյունարերություն (գործարաններ Գո-
րի և Լենինական քաղաքներում) 20 հազ. տոնն արտադրողա-
կանությամբ և 10,860 հազ. ռուբ. արժողությամբ, ուղարկացանքի
արտադրություն (Եօր-Բայազետում), լայն զարգացում տալով
պահանջների արդյունարերությանը, վոր խոշոր հեռանկարներ
ունի Ա.Աթիշը յիշեք հանրապետություններում։

Պահածոների արդյաւնաբերության համար յեղած հումուր

թի բազայի առկալությունը (հալիքու, գոյություն) վոչ մի կասկածի առիթ չի տուիս: Մինչդեռ քաղաքներին բանջարեղենն մատակարարելու շահախնդրությունը և գուղղացիական տնտեսության շահաբերության բարձրացումը պահանջում են ամենաուշադիր վերաբերմունք դեպի արդյունաբերության այդ բնագավառը, արագացնելով ծախսեր անելը պլանով նախագծված պահածոների գործարանների կառուցման համար:

Ա.Ս.Ֆինչ պահածոների արդյունաբերության առաջ լայն հեռանկարներ են բացվում՝ վոչ միայն մատակարարելու Անդրկովկասի ու Միության շուկաներին, այլև արտահանելու, մանագանդ մրգի պահածոներ:

Գումարելիներ (իտոգներ).—Ընթացիկ հնգամյակում ինչ փոփոխություններ կառաջանան Ա.Ս.Ֆինչ արդյունաբերության մեջ: Պետական պլանավորվող ցենզային արդյունաբերության ընդհանուր արտադրանքը (առանց Ազնեֆթի, մանգանի և Արթիկի տութիւնի արտադրանքի) 1926—27 թվի բացթողի (օտպուշեգործարանական) գներով կրաքարանա հնգամյակի սկզբին յեղած 145,994 հազարից մինչև 498 միլիոն 715 հազարի, այսինքն՝ կաճի համարյա 3 և կես անգամ, յուրաքանչյուր տարում տալով 21-ից մինչև 38 տոկոս աճ, մինչդեռ կապիտալիստական յերկըրներն իրենց ամենաբարձր վերելքի տարիներին չեն ունեցել 8—8 և կես տոկոսից ավելի արտադրանքի աճ: Ավելի բուռն թափով կաճի ծանր արդյունաբերության արտադրությունը: Այսպիսո, որինակ՝ վառելիքի ալյուրնաբերության արտադրանքը կավելանա 731 տոկոսով, լեռնալինը—556 տոկոսով, քիմիականը—523 տոկոսով և այլն: Համեմատաբար դանդաղ, բայց դարձալ շափականց արագ կաճի թեթև արդյունաբերության արտադրանքը: անքստիլ արդյունաբերությունն իր արտադրանքը կրաքարացնի 411 տոկոսով:

Հնգամյակի ընթացքում կատարված ներդրումների հետեւ վանքով հետեւյալ կերպ կաճեն նաև հիմնական փոնդերը: Յեթև հնգամյակի սկզբին նրանք կազմում ելին 119,5 միլ. ոուրլի, ապա հնգամյակի վերջին նրանք կհասնեն 381 միլ. ոուրլու, այսինքն՝ կաճեն 218 տոկոսով: Առանձնապես կաճեն արդյունաբերություններ արտադրող ճյուղերի հիմնական փոնդերը: Այսաեղ հիմնական փոնդերը 40,5 միլիոն ոուրլուց կրաքարանան մինչև 185 միլ. ոուրլի, այսինքն՝ կաճեն 356 տոկոսով: Լայն սպառման միջոցներ արտադրող արդյունաբե-

բության բնագավառում փոնդերը 79 միլիոնից կը արձրանանք մինչև 1960 միլիոն, այսինքն՝ կանեն 196 տոկոսով։ Այդ բանի հետևանքով ծանր արդյունաբերության տեսակաբար կէփոը հիմնական փոնդերի մեջ կավելանա հնդամլակի սկզբի 34 տոկոսից հնդամլակի վերջին 48,5 տոկոսի։

Բննելով այն փոփոխությունները, վորոնք տեղի կունենան արդյունաբերության հիմնական դուրքի մեջ հնդամլակի ընթացքում, պետք ե հավասարել վոր ալդ ժամանակամիջոցում նա բուլորովին կնորանա Հիմնական դուրքի մաշվածքը հնդամլակի ընթացքում կկազմի, մոտավորապես, 37 միլ. ոուրլի. իսկ լիթե նկատի ունենանք, վոր ԱՄֆիլ արդյունաբերության հիմնական փոնդերը 1925—26 թվին հաշվվում ելին 57 միլ. ոուրլի, ալդ զեղքում, պարզ ե, վոր հնդամլակի վերջին մենք կունենանք, եյապես, միանդամայն նոր կառուցված արդյունաբերություն։ Արդյունաբերության կազմության (ստրուկտուրա) մեջ ես տեղի կունենան առաջադիմական վճռական քալիեր. հաստատուն հիմքեր կատեղծվեն մետաղագործական արտադրության հետագա զարգացման համար ԱՄֆիլ մեջ (Տկվարչելի, Դաշքեսան, Փերք մարդարան, գունավոր մետաղների ձեռնարկություններ), և փարթամորեն կծագկի տեղական հումուլթի վրա հիմնված արդյունաբերությունը (տեքստիլ, համ ու սննդի), առաջ կերթա նաև քիմիական արդյունաբերությունը և շինանյութերի արդյունաբերությունը։

9. ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատեսության ասպարիզում հիմնական խնդիր ե հանդիսանում՝ գյուղացիական անտեսության սոցիալիստական վերակառուցումը՝ բարձր մեքենական տեխնիկայի բազայի և կոլլեկտիվացման ու կոստերացման հիման վրա։ Այսադե նախագըծ են ձեռնարկումներ, վորոնց համաձայն պետք ե հիմնվելին խորհունակություններ, կազմակերպվեր կոլանակությունների լայն ցանց, կազմակերպվելին տրակտորային կալոննաներ և մեքենա-տրակտորային կայաններ՝ համապատասխան Անդրկովկասություն լուրահատուկ պայմաններին Զեռնարկումներ ելին ծրագըր-ված դարկ տալու գյուղատնտեսական կոստերացիայի աճին, ուժեղանում և կոնտրակտացիայով հումուլթի և պարենի մշակություններն ընդգրկելու վործը։

Սոցիալիստական համագույն շինարարությունը ԱՄֆիլ մեջ

կպահանջի կազմակերպչական և նյութական ուժերի մեծ լարվածություն։ Պլանը ծրագրում և հանրայնացնել ցանքի ամբողջ տարածության 18,6 տոկոսը (2,699 հազ. հա-ից 502 հազ. հա) և բոլոր տնտեսությունների 17,4 տոկոսը (963 հազ. տնտեսություններից 166 հազ. տնտես.)։ Գլուղատնտեսական բնակչությունը նրանցում կհասնի 747 հազ. հոգու, հնգամյակի սկզբի 50 հազարի համեմեպ։ Կապիտալ ծախսելը լինթադրվում էն 57 միլիոն ռուբլու սահմաններում։

Գյուղատնտեսական կոռպերացիայի մեջ պետք է ներդրավվին 638 հազ. տնտեսություններ՝ ալժմյան 150 հազարի հանդեպ, չհաշված վարկային ցանցը։ Զքավոր-միջակ մասսաների արտադրական կոռպերացումը կհասնի ամբողջ բնակչության 66,7 տոկոսին՝ հնգամյակի սկզբին լիղած 16,6 տոկոսի հանդեպ։

Գոլություն ունեցող խորհտնտեսությունների ցանցը (56) 1,475 հա ցանքի տարածությամբ, կավելանա 30 նորով, իսկ ցանքերի տարածությունը կհասնի 34,500 հա-ի։ Էորհտնտեսությունների բուսաբուծության ընդհանուր արտադրանքը կկազմի 13,700 հազ. ռուբլի՝ 2,15 հազարի հանդեպ։ Տրակտորների թիվը կհասնի 800-ի, տեխնիկական ձեռնարկությունների թիվը՝ 47-ի՝ 25-ի հանդեպ։ Կապիտալ ներդրումներ լինթադրվում են 46,040 հազ. ռուբլի։

Եինարարության ծրագրված ծավալը հանրայնացված ամբողջ հատվածում կուրաձուացնի նրա տեսակարար կշիռը բուսաբուծության ամբողջ արտադրանքի մեջ մինչև 27,2 տոկոս, իսկ ապրանքային ամբողջ մասսալինը՝ մինչև 52 տոկոս, այսինքն, մեր գյուղատնտեսության ամբողջ ապրանքային մասսայի կեսից ավելի*։

Մելիորացիա լին
իրրիգացիա

Ա.Ս.Ֆենչ ժողովրդական ամբողջ տնտեսության, մասնավորապես՝ գյուղատնտեսության համար ժողովրդա-տնտեսական կարևորագույն պլոտեմ և հանդիսանում մելիորացիայի ե, մասնավանդ վոռոգման պլոտեմը։ Նկատի ունենալով Անդրկովկասի

* Եյտանական արդին իրավել և հնգամյա պլանի այս, թվում երթե, համարձակ նախագծաւմներից։ Կոլանտեսական շինազարության բուսն աճը, շինարարության, վար զյուղի սոցիալիստական վերաշնուրացման մեջ և քաշել չըավոր-միջակ մասսաները, վար նպաստի և զրել իրեն՝ լիկվիդացիայի լինթարկել կուլակին, «վարուս դասակարգի», —արգեն այս իսկ տարի, հագանորեն, հնասնի հնգամյա պլանի ցուցանիշներին

չորավիճ կլիման, նրա կիզիչ անապատավիճն տափաստաները, Աև ծովի տիքին ընկած ընդարձակ հանձնալին տարածությունները, նախալեռնալին շրջանների տղբարային ուժեղ գերաբնակչությունը, — Անդրֆեղերացիալի մելիորացիան և վոռողումը գլուղանական տարածության վերակառուցման կարեորագույն ձեռնարկումներից մեկն են հանդիսանում: Մելիորացիան ու իրեկացիան հսարաւզորություն են տալիս՝ ավելացնելու վերկրի կուլտուր հողագին գոնզը և թուլացնելու ագրարալին վերաբնակչությունը, կաղմակերպելու վոռողվող շրջաններում բարձր-ինտենսիվ ջրովի ոնականություններ՝ սոցիալիստական բազայի վրա, ընդլայնելու արդյունաբերության հումուրթի բազան, ընդարձակելով կարեոր և ամենամեծ ազրանքանություն ունեցող տեխնիկական մշակութիւնից բարեկալի տարածությունը: Ա.Ս.Ֆ.Հ. պայմաններում վոռողումը հանդիսանում և վճռողական նախադրյալ՝ վերածելու քոչվորական և կիսաքօնվորական տնտեսությունները կուլտուրական հողագործության հարթավայրերում և ալպիական տնտեսության լեռնաստաններում: Բացի դրանից, հոգային խոշոր մասսիների չորացումը լուծում և մալարիալով հայտնի շըրջաններն առողջացնելու խնդիրը:

Ներկալում արդեն վառողելի հողերի մինչօլատերազմական գոնզը գոչ միայն լիովին վերականգնված և, այլև 11 տոկոսով վերապահված և ինաշիվ վերջին տարիների ջրատնտեսական աշխատանքներին:

Այդ պատճառով մելիորատիվ ու վոռողիչ աշխատանքների ոլոնի և հնգամիտ պլանով նախադված ջրովի նոր տարածությունների նախապատրաստառության արագացման անհրաժեշտությունը առաջին առաջին աեղն և քաշում ախտությին խոշոր շինարարությունը:

Ա.Ս.Ֆ.Հ. վառողիչ շինարարության պլանի մեջ մտցվում են իրեկացիան հիմնական խոշոր այն աշխատանքները, վորոնք հրապարակի վրա զբարեցին վորովս կարեորագուման աշխատանքներ վերջին տարիների ընթացքում Անդրկովկասի ջրալին տընտեսության որդանների տարած հետազոտական, նախազմական և շինարարական աշխատանքների պրոցեսում:

Ազագիս, Խորհրդավին Ազրբեջանի պլանի մեջ մացվում են հետեւյալ աշխատանքները: վերակառուցել և ընդլայնել Մուղանի գաշտի վառողումը, ջրովի ընդհանուր տարածությունն ավելացնելով մինչև 35,000 հա, Միլլի գաշտում կառուցել Գյառուր-

Արխներ ջրանցքը՝ 33,000 հա տարածության վրա։ Վոռոգել Սալլանի դաշտը 10,000 հա, ավարտել Կարասախկալի սիստեմը՝ 3,000 հա, վերակառուցել Զեզամի ու Աղստաֆի սիստեմները՝ 17,500 հա, և վերակազմել Թարթառի սիստեմը՝ գոյություն ունեցող ջրովի տարածություններում բամբակի ցանքսը ավելացնելով մինչև 12,000 հա։ Ղարայազի դաշտի 2-րդ բաժանմունքի ընդլայնումը և նույն դաշտի 4-րդ բաժանմունքի նոր վոռոգումը կտա 7,000 հա աճում, Կուր գետի մոտիկ շրջանում լեղած վոռոգման հին սիստեմի վերակազմությունը և մեքենական նոր վոռոգման կառուցումը 65,000 հա տարածության ավելացումով։ Վերակազմել Արփաչայի սիստեմը և զարգացնել ջրհան մեքենայով վոռոգումը Խորհրդային նախիջնանի հանրապետության մեջ՝ 3,000 հա։ Չորացնել Յեվլախի ճահճաները և զարգացնել իրրիգացիոն աշխատանքները Միլի գաղտում, այստեղ անցկացնել Միլի յերկրորդ ջրանցքը 40,000 հա տարածության վրա և դրա հետևանքով՝ Արաքսի սիստեմի վրա կառուցել ջրամբարներ և անհրաժեշտ կառուցումներ՝ ջուր մատակարարելու Մուղանի դաշտի սիստեմներին։

Խորհրդային Հայաստանում վոռոգիչ շինարարության պլանի մեջ և մտնում հետեւյալը. ավարտել Փոքր Սարդարաբադի վոռոգման աշխատանքները՝ ավելացնելով 42,000 հա, և Այդր լճինը՝ 4000 հազ, դուերի վոռոգման գործը՝ 50,000 հա, Արագայանինը՝ 10,000 հա, սկսել Մեծ Սարդարաբադի ջրանցքի աշխատանքները և չորացնել ուղղվերակառուցել Կարա-Սուն (Սկ. ջուրը) և Զանդիբասարը։

Խորհրդային Վրաստանում պլանի մեջ մոցվում են հետեւյալ աշխատանքները. չորացնել Կոլխիդայի հարթավայրի ճահճաները՝ 200,000 հա ընդհանուր տարածությամբ, վորից ընթացիկ հնգամյակում պիտի պատրաստ լինի վոչ պակաս, քան 60,000 հա չորացված տարածություն։ Ավարտել Արաղանի հովտի վոռոգման աշխատանքները՝ 44,000 հա տարածության վրա և Տիրիպոնի հոտում՝ 26,000 հա տարածության վրա։ Վերակառուցել Ղարայազի դաշտում 1-ին բաժանմունքի վոռոգումը և նոր վոռոգել 3-րդ բաժանմունքում 9,000 հատ Վերակառուցել Բորչալուի սիստեմը՝ ավելացնելով 16,000 հա, ջուր հանել դեպի Շիրակի դաշտը՝ 30,000 հա տարածությամբ։ Վոռոգել Եղարի դաշտը՝ 10,000 հա և արագացնել Սամզորի վոռոգման աշխատանքները՝ 73,000 հա տարածությամբ։ Այս աշխատանք-

Հերն ամբողջովին պետք է վերջացնել հետեւալ հնդամյակին և աստիճանաբար պատրաստելով հողերը ներկա հնդամյակում:

Բացի խոշոր որևէկտներից, պլանի մեջ մտցվում է ջրովի տարածությունների աճումը մանր չինարարության կարգով, կառուցելով և վերակառուցելով քահարեղներ, չարխեր ու պլ փոքր որլեկտներ, ինչպես և բարեկարգելով գոլություն ունեցող վոռոգման ցանցը, ուացիոնալացնելով ջրովազործութը՝ բարձրացնելով սիստեմների մեջ ողտակար գործողության կոեֆֆիցիենտը, մտցնելով ջրի ճիշտ շրջանառություն և այլն: Այս ձեռնարկումներով տարածության ընդհանուր աճը կհասնի 115,000 հա-ի:

Արտիստիկ, Ա.Ա.Ֆիշէ մելիորացիալի ու իրրիգացիալի պլանով ձեռք առնված ձեռնարկումները 1932—33 թվին կտան հետեւալ աճը (աղյուսակ № 9):

Աղյուսակ № 9

Ձեռնարկումներ	Նախազատ-րաստական	Ընակումը (օսвоеնі)	Բամբակի-տարածություն
Խոշոր չինարարություն	311,100	269,600	77,200
Մանր չինարարություն	110,700	109,300	31,700
Շահագործում	51,500	51,500	13,000
Ընդամենը	473,300	430,400	121,900

Բամբակի ընդհանուր տարածությունը 1933 թվին հավասար կլինի 262,100 հա-ի:

Զավաճ բամբակի լեռոյթը (ՎЫХОД), հաշվի առնելով մուս մշակույթների անտեսությունից գուրս վանումը, 1933 թվին հավասար կլինի 780 հազ. ցենտների կամ 900 հազ. ցենտների 1934 թվին:

Ա.Ա.Ֆիշէ վոռոգման և ճահիճների չորացման համար ներդրությունների ընդհանուր գումարն է 160,450 հազ. սուրլի, այդ թվում թյուջեներով — 134 միլիոն սուրլի, բնակչության միջոցները՝ 8,450 հազ. սուրլի և ջրալին տուրք — 18 միլիոն սուրլի:

Կապիտալ մուծումները մասնաւ են այս գումարի մեջ հետեւալ կերպ — հազ. սուրլիներով (աղյուսակ № 10):

Աղյուսակ 10

Զեռնաբեկութիւններ	Բյուջե	Բնակչ. մի- ջոցները	Ջրային տուրք	Հնդամենը
Խոշոր շինաբարություն	94,650	4,650	—	99,300
Մանր շինաբարություն	23,400	3,800	—	27,200
Հետազոտ. ու հետախուզ.	9,450	—	—	9,450
Հնդամենը	127,500	8,450	18,000	153,950 <i>(Հաշված նաև ջրային տուր- քը).</i>

Ջրատնտեսական աշխատանքների պլանի մեջ առանձին տեղ և բռնութ կոլխիդալի հարթավայրի չորացումը (Փոթու, արխաղական և աջարական ճանիքները), վորը ԽՍՀՄ մեջ միակ ռայոնն և, վորտեղ կարող են աճել մերձարեադարձին մշակութներ (ռամփի, բամբուկ, կենաֆ, Նոր Զելանդիայի վուշ, կառչուկաբեր ծառեր և գեղաբույսեր, եթերայուղ ստանալու համար բույսեր, նարինջ, լիմոն, մանդարին և այլն):

Դրան զուգընթաց, այս աշխատանքների իրազործումն զգալի չափով կլուծի ագրարային գերաբնակչության սուր հարցը Արևմտյան Վրաստանում (ավելորդ գարձնելով բնակչության գաղթը գեղի Սև ծովի շրջանը), բավական կերճատի այդ ապրանքների ներածումը ԽՍՀՄ մեջ, կթարձրացնի Սև ծովի լիբկաթուղու շուրջ շահագերությունը և կվոչնչացնի մալարիան:

ԱՄֆիչ մեջ վոռոգիչ աշխատանքների պլանային ծավալ-ման հիմնական նախադրյալ և հանդիսանում է ուր, Արագս գետերի ավաղանի ջուրն ոգտագործելու ընդհանուր սխեման կազմելու աշխատանքի ավարտումը: Այդ սխեման հնարավորություն կտա ավելի ճիշտ կերպով իրագործելու ԱՄֆիչ հողային մասսիվները վոռոգելու խոշորագույն նախագծերը:

Դեռ 15-րդ համագումարը պարզեց:

Մյուս հետաք-

թե հողային տարածությունների կարդա-

կումները

վորված մինելը պահանջում և ուժնդաց-

նել հողաշնարարության աշխատանք-

ները, առանց վորոնց իրագործման անհնարին և զյուղացիական տնտեսության արագ բարձրացումն ու սոցիալիստական վերակառուցումը, և վորոնցից զուրս՝ լիբկյուղ կա, վոր հողոգտագործումը կենտրոնանա կուլակության ձեռքին»:

Պլանը յինթագրում է հողաշինարարությունն անցկացնել այսպիսի հաշվով, վոր այն ավարտիլի 7 տարվա ընթացքում։ Պլանի ալսոլիսի լարվածությունը կպահանջի կազմակերպչական մեծ ջանքեր և 20 միլիոն հիմնական մուծությունը կպահանջի ստեղծել հողոդագործման ալսոլիսի ձևեր, վորոնք ամենամեծ չափով կնպաստեն չքավոր ու միջակ մասսաների արտադրական կոռուպ-րացմանը և նրանց կոլեկտիվացմանը։

Հետո, ինչպես հալունի լի, Ա.Ս.Ֆելչ հանդիսանում է ազգա-րային գերարնակչության շրջան։ Տնտեսավարության այժման պարմաններում գյուղատնտեսական ավելի բնակչության քանակը մոտենում և 650 հազարի Ազգարային գերարնակչության դեմ ուայրարի հիմնական միջոց ընդունելով գյուղատնտեսության ինտենսիվիկացումը, պլանը, այնուամենալիք, համարում է, վոր մոտել ապագայում։ Ա.Ս.Ֆելչ գյուղատնտեսությունը չի կարող ավելի բնակչությունն ամրագովին կապել գերարնակ շրջանների հետ, և նրա մի մասը պետք է տեղափոխվի ուրիշ վայրեր։ Այս նույն բանը պահանջում է նաև այն նոր հողերի անտեսական ըն-տելման (օօօօնու, մշակման) անհրաժեշտությունը, վորոնք ստացվելու յին մելիորացիալի, հողաշինարարության և անտառ-ները մաքրելու հետեւնքով։

Ցենթագրում է տեղափոխի 48,720 անտեսություն։ Նրանց համար վերաբնակեման հողային փոնդը կկազմի 243 հազ. հա, ներ-դրությունը՝ ը27,5 միլիոն ոուրլի։

Կարեռագույն այն ձևանարկումների թվի մեջ, վորոնք բղուում են գյուղատնտեսության ստցբակասական վերակառուց-ման, գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտագրանքի վորակն ու արտադրությունը լա-վացնելու անհետաձգելի խնդիրներից, —մանում են տնտեսական-ակինշիկական և կազմակերպչական բնույթ ունեցող մի շաբք ձևանորկությունը։

Դրան են վերաբերում, տռաջին հերթին, մեքենաբացումը և արակառացումը։ Անդրկողկասայան գյուղը շատ քիչ եր ապա-հովված լեզել գյուղատնտեսական ինվենտարով։ 1 հա ցանքի տարածության համար ամրող կուլտուրական ինվենտարն ար-ժեքը, ինչպես տռացինք, 2 ու 74 կազիկ։ Նահապետական արոր-ները 385 հազար հատ են։ Այսպիսի պայմաններում իրենց ամ-բողջ ծավալով հրապարակ և գտի Անդրկողկասի գյուղատնտե-

սության տեխնիկական և եներգետիկ վերազինման հետ կապված ձեռնարկումների հարցը:

Պահանջ յենթադրում և 3 տարվա ընթացքում արորներից ամբողջությամբ անցնել կուլտուրական գութանի, հնգամյակի ընթացքում ապահովել ցանքի ամբողջ տարածությունը գութանի մշակութեամբ, ապահովել տնտեսությունները տրիերներով այնպիսի հաշվով, վոր 5-ամյակի վերջին հնարավոր լինի ամբողջ սերմանլութը յենթարկել մեքենալական գտնան: Շարքացանը 100 տոկոսով մտցնել բամբակագործական հողերում ու 50 տոկոսով՝ հացահատիկալին մշակության մեջ և ամբողջությամբ բավարարել գուղատնտեսության հանրայնացված սեկտորի գլուղատնտեսական մեքենաների ու գործիքների պահանջը:

Այս խնդիրներն իրագործելու համար պահանջվում է հընդամենքի ընթացքում յերկիրը մտցնել 23,8 միլիոն ոռուրլու գործիքներ և 5 հազար տրակտորներ՝ իրենց գուլքով ու պահեստի մասերով ($18^{1/2}$ միլիոն ոռուրլու գումարով): Դրա նպատակն է՝ մի կողմից արտադրության պրոցեսները կոլտնտեսություններում ու խորհնատեսություններում լիովին վերածել մեքենացման, մյուս կողմից՝ սահմանել արակտորային կալոններ և միջդյուզյան մեքենա-տրակտորային կայաններ՝ մասսայականորեն մեքենայացնելու հանրայնացված գլուղացիական տնտեսությունները, առաջին հերթին բամբակագործական շրջաններում:

Այս խոկ ձեռնարկումների մեջ և մտնում լայն արտադրական կոռպերացումը և կոլեկտիվացումը՝ գյուղատնտեսական խնդուստրիայի միջոցով ու նրա շուրջը:

Այնպիսի պայմաններում, վորոնց մեջ և գտնվում արժեքավոր հատուկ մշակությների տեր անդրկովկասյան գլուղատնաեսությունը, գլուղատնաեսության ինդուստրիացումը խաղում է միանդամայն բացառիկ գեր (թեյի, խաղողի, ծառապաղի ու բանջարի, կաթնամթերքների, ձվի ու թռչնաբուծական արդյունաբերություն և այլն): Այսուղ ծրագրված ձեռնարկումներով յենթադրվում է ֆերմենտացիոն (խմորուն) պահեստներով անցկացնել ծխախոտների 100 տոկոսը, հնգամյակի ընթացքում 50 տոկոսով վերացնել նկուղների (պողպալ) պահասը, գինեգործաբանների միջոցով անցկացնել աղբանքային գինու 50 տոկոսից վոչ պահասը:

Հնգամյակի վերջին վերամշակման պետք և յենթարկել

ճառապաղի այդեզործության և պարտիզանության ապրանքալին ամրող մասսալի մոտ 20 տոկոսը՝ ալժմյան 3 տոկոսի հանդեպ ու վերամշակել խոչոր լեզյուրավոր անասունի կաթի արտադրանքի մոտ 20 տոկոսը՝ այժմյան 3^{1/2} տոկոսի հանդեպ:

Եթուարաբության արև թափը, ներառյալ նաև բամբակի ոկցինական վերամշակման ձեռնարկությունները, վերամշակվող հումութիւնի արժեքը կատացնի 190 միլիոն սուրլու՝ 1927—28 թ. 40 միլիոն սուրլու հանդեպ:

Գյուղատնտեսական ինդուստրիայի դարձացումը սերտորեն կապվում է գյուղական ելեկտրիֆիկացիայի շինարարության հետ: Այստեղ յենթայիրվում է 36 նոր ելեկտրահասառում, մինչև 4 հազար կվատ: հզորությամբ, 9,9 միլ. սուրլի արժողությամբ:

Գյուղական ելեկտրաշինարարությունը պետք է ամենամեծ չափով կազմած լինի խորհնանառությունների, կոլտնտեսությունների և մեքենա-արակորքային խոչոր կայանների շինարարության հետ: Կազմական ներդրումներ նշված են 77,3 միլիոն սուրլի:

Հատուկ ուշադրություն է դարձվում կախեթի կայանին՝ Ալագոնի ջրանցքի ջրհոսքի (ուրոպալ) վրա՝ 4^{1/2} հազ. կրվակարողությամբ՝ Կախեթի հարստագույն շրջանում գյուղատնտեսությունը ելեկտրիֆիկացման յենթարկելու համար կայանի արժեքն և 2 միլիոն սուրլի: Ընդումին՝ գյուղական ելեկտրաշինարարությունը ամենամեծ չափով պետք է կապակցվի խորհնանառությունների, կոլտնտեսների և խոշոր մեքենատրակորքային շինարարության հետ:

Տերքատվությունը խորացնելու պրոբլեմը հանդիսանում է Անդրկովկասի գյուղատնտեսության կարեռագույն հարցերից մեկը: Տերքատվության բարձրացումը կնպաստի վոչ միայն աղբարարային գերարծակալության մեղմանալուն, ալև հացախարային զեֆիցիաֆի վերանալուն և հումութիւնի փոնզերի ուժեղանալուն:

Տերքատվությունը բարձրացնելու հետ կազմած մի շարք կազմակերպչական-տեխնիկական ձեռնարկումների մեջ (հողի մշակում, տեսակավոր սերմեր, մեքենացում և այլն) խոշոր տեղ է բռնում հողի պարարտացումը:

Հնդկամբակի ընթացքում պլանը լինթագրում է 100 տոկ. պարարտացնել պարարտացման կարոտ բամբակահողերը և հացախատիկային հողերի 15 տոկոսը: Պարարտացման համար նախառաված և հատկացնել 25,1 միլ. սուրլի:

Պլանն այնուհետև նախագծում է ընդարձակ ծրագիր փորձնական գործի և ագրո-ոգնության ասպարիզում։ Գումարելով գյուղատնտեսության բոլոր պահանջները՝ բարձրագույն ու միջակ կրթության տեր ագրո-անձնակազմի վերաբերմամբ, կտեսնենք, վոր պահանջ կա բարձրագույն և միջակ կրթությամբ՝ 3,820 ագրո-անձնակազմի՝ արժմեան 768-ի հանդեսը։

Դա ամենաբարդ պլրոբլեմն է, վորը կպահանջի՝ վերակազմակերպել Անդրկովկասի ժողովրդական կրթության սխոտեմը և ուժեղացնել անդրկովկասալան էերիտասարդության ուսման գործը Միության մասնագիտական ԲՈՒՀ-երում (բարձրագույն ուսումնական հաստատություններում)։

Ա.Սթիէ գյուղատնտեսության յետամնացության ամենամեծ պատճառներից մեկն ե անասնապահության քոչվորականն և կիսաքոչվորական ձեւը։ Տնտեսության այս ձեւի մաքսիմալ վերացումը և բնակչության փոխանցումը կուլտուրական հողագործության՝ հարթավայրերում ու ալպիական տնտեսության՝ լեռնաստաններում՝ հանդիսանում է պլանի առաջնագույն հոգսը։

Ա.Սթիէ գյուղատնտեսության բնական և տնտեսական բացառիկ պայմանները նրա դաշտավարության մասի հետաքաղաքացուցումը թեքում են դեպի տիկնիկական թանգարժեք մշակութների կողմը (բամբակ, ծխախոտ, կենափ, քունջութ, ձակնչեղ, թեյ, մերձարևադարձալին մշակութներ)։

Այստեղ, բացի արգեն հիշված իրբիզացիոն շինարարությունից, մեքենայացման հետեղացումից, ագրո-զոռոտեխնիկական ձևունարկումներից, քոչվորական տնտեսության դեմ պայքարելուց, — հիմնական հարց ե հանդիսանում՝ այդ ուայսներին միութենական եժան հաց մատակարարելու պրոբլեմը։

Անդրկովկասի հայահատիկային տնտեսությունը կրում է կիսանատուրալ սպառողական ընույթը և գնչ մի դեր չի խաղում ինքը արտաքին ապրանքաշրջանառության մեջ։ Թեև պլանն առաջ և քաշում հացահատիկային մշակութների մաքսիմալ բարձրացման խնդիրը, ընդարձակելով այդ մշակութների տարածությունը ի հաջիվ պառկած ու նոր հողերի և բերքատվության բարձրացման, — սակայն հացի տեսակետից Անդրկովկասը դեռ յերկար ժամանակ կմնա դեֆիցիտային յերկիր, վոր կարիք ունի բերովի հացի։ Այս հացի նպատակն է գնչ միայն ծածկել քաղաքային բնակչության, ու տեխնիկական մշակույթների շըբջանների գյուղացի բնակչության սննդի դեֆիցիտը, այլև մա-

Նյուվրային ֆոնդ ստեղծել՝ արագացնելու համար վերակառուցման պրոցեսները զբաղանահանության մեջ (տեխնիկական թանգարժեք մշակույթների, կերի խոտերի արմատացումը և այլն):

Առշոր ու մանր յեղջյուրավոր անասունների ապահովվածությամբ, ընտելան-պատմական, ինչպես և տնտեսական պահանջներով Անգրելովկասն ունի վոչ պակաս բացառիկ հնարավորություններ՝ արդյունարեր (պրոդյուկտիվության և կենդանարուծության մանր ճյուղերի զարդացման ասպարիզում (կաթնատնահանություն՝ պանրապորձության հետ միասին, միևնույն բուրդ տիպը վոչխարարուծություն, խողարուծություն, թաշնարուծություն և շերամապահություն):

Այսուղի կենտրոնական խնդիր են հանդիսանում — կազմակերպել ալպիական տնտեսություններ լեռնային շրջաններում և անցնել անասունը խնամելու գոմային ու կիսագոմային ինտենսիվ ձեռներին հարթափայլերում: Մաքսիմալ չափերով կենդանաբուծությունը պետք է կապել դաշտավարության հետ. ընդլայնել կերի բազան. լայն չափերով կազմակերպել կենդանաբուծական խոշոր խորհանականություններ և ուժեղացնել ենթանարուծության արտադրանքի սկզբանական վերամշակումը՝ գլուղացի ական անասունությունների կասպերացման բազալի վրա. ուժեղացնել ձեռնարկումները անասունի համաճարակ հիմքանդությունների (եպիգրանիա) դեմ. բարելավել անասունների (հոտի) վորակը և այլն: Մրագրված այս ձեռնարկումների հետեանքով հոտը կաճի 19,8 տոկոսով, իսկ կերի ուսուուրսների աճը (28,3 %) կանցնի հոտի ամից, հաստատուն բազա ստեղծելով նրա հետագա զարգացման համար Համալրատասխան ձեռվ աճում և նաև հոտի արգյանափորությունը:

Գումարելեր (ինպեր) Պլանով նախագծված ձեռնարկումների հետեանքով ցանքերի տարածությունը 1932—33 թը մին հասնում է 2,699,000 հեկտարի՝ հնգամյակի սկզբին յեղած 2,133,000 հեկտարի հանգիստ: Ալպիստով, ցանքի տարածության ընդհանուր աճը ԱՄՖԽ մեջ կկազմվի 556 հազար հեկտար, այսինքն՝ 26,5 տոկոսով ավելի 1927 թվի տարածությունից: Ընդումբն, հացահատիկներն աճում են 12,92 տոկոսով, իսկ տեխնիկական մշակույթները — 108 տոկոսով և ցանովի խոտերը — 864,3 տոկոսով: Յանքերի տարածություն աճի ազրյուր կհանդիսանա 295 հազար հեկտարի վոռողումը և մոտ 30,000 հեկտար ձահճաների չորացումը, անջրդի շրջաններում պառկած հողերը (կորդերը) հերկելը — 152 հազ. հեկտար և այլն:

Մշակութների տեսակարար կշռի մեջ տեղի կունենան հետևյալ փոփոխությունները. հացահատիկները կընկնեն 89,8 տոկոսից մինչև 80,2 տոկոս, տեխնիկական մշակութները կըարձանան 7,2 տոկոսից մինչև 11,8 տոկոս և մլուսները—3 տոկոսից մինչև 8 տոկոս, ալսինքն՝ տեղի կունենա ցանքի տարածության աճը մշակույթների ինտենսիվ տեղափոխություն (պերեմեցիոն) հետ՝ հումուլթի և կերի բազայի ինտենսիֆիկացման ու դգալի ընդլայնման ուղղությամբ:

Ենթադրվում է 1932 թվին բերքատվության այսպիսի աճ. հացահատիկներին մշակույթների բնագավառում—20 տոկոս, այդ թվում՝ կոլտնտեսություններում—30 տոկոս, բամբակը—70 տոկոս, այդ թվում՝ կոլտնտեսություններում—115 տոկոս:

Կերի ռեսուրսների ծրագրված աճի պայմանում անասունների աճը կարտահայտվի հետևյալ կերպով. խոշոր խղջուրավոր անասունները կաճեյին 1932—33 թվին (1927—28 թվի համեմատությամբ) 123,8 տոկոսով, վոչխարները—114,9 տոկոսով, խողերը—136,9 տոկոսով, իսկ բոլոր անասունները՝ վերածած խոշորի—119,8 տոկոսով:

Միաժամանակ կըարձրանա կաթնատվությունը 30 տոկոսով:

Հնդամյակի ընթացքում ամենից ավելի կտարածվի բամբակը, Անդրկովկասում հումուլթի այս ամենակարենոր մշակութը, վորի տարածությունը հնդամյակի վերջում կհասնի 240,800 հեկտարի՝ 1927—28 թվի 124,600 հեկտարի և 1914 թվի 140 հազար հեկտարի հանդեպ:

Հնդամյակի վերջին հնդամյոր բամբակի ընդհանուր բերքը կհասնի 763,000 հազար տոննի՝ նախկին 249,6 հազար տոննի հանդեպ. Ապրանքային մասսան կկազմի 247,2 հազար տոնն, վորից 68,9 հազ. տոննը կգործադրվի անդրկովկասյան տեքստիլ արդյունաբերության կարիքների վրա և 178,3 հազ. տոննը—միութենականի. Հնդամյակի վերջին ծխախոտի տարածությունը կկազմի 21,9 հազ. հեկտար, ընդհանուր բերքը—21,3 հազ. տոնն, ապրանքային մասսան—20,9 հազ. տոնն, վորից 5,5 հազ. տոննը կգործադրվի անդրկովկասյան արդյունաբերության համար, 8,4—միութենական, միացածը—արտածման համար:

Պակաս խոշոր չի լինի նաև դյուզատնտեսական հումուլթի մյուս ճյուղերի ապրանքային յելութը (գետնախնձոր, շաքարի ճակնդեղ, կաշի, բուրդ, բոժոժ և այլն):

Թելիք տարածությունը 1934 թվին կհասնի մինչև 40 հազար հեկտարի, բերքատվությունը կրաքրանա 40 տոկոսով:

Միության Պետադաշտ արև նվաճումների առթիվ գրում են «Պրանով նախադժված հումուզի բաղադրի աճը (բամբակ, ծխախոտ, թիւ, կենափ, կաշի, բանձ, բուրդ) բավարար կերպով իրացրում և ժողովրդա-անտեսական առաջադրությունները հընդամելակի ընթացքում և լիովին ապահովում և միութենական ու տեղական արդյունաբերության՝ Անդրկովկասի վերաբերյալ հայտերը (ՅԱՅԲԿ)»:

Նշանակալիքիրեն աճում և նաև պարենի բաղան:

Պրանով նախադժված ձեռնարկումները վերջին հաշվով՝ հնդամյակի գիրջում ուղիալական և վորակային հետեւալ փոփոխություններն են մացնում զյուղատնտեսության մեջ՝ Ընդհանուր արտադրանքը կամի 67,2 տոկոսով, այդ թվում՝ բուսաբուծությունը՝ 68,6 տոկոսով, կենդանաբուծությունը՝ 64,2 տոկոսով, ամրոց զյուղատնտեսության ապրանքային մասը՝ կամի 114 տոկոսով, այդ թվում՝ բուսաբուծությունը՝ 151 տոկոսով և կենդանաբուծությունը՝ 121 տոկոսով:

Հնդամյակի ընթացքում զյուղատնտեսության ապրանքայն սիմբունը կհասնի 40,3 տոկոսի՝ նախկին 27,6 տոկոսի հանդեպ՝ զյուղատնտեսական ընակչության յուրաքանչյուր շնչին ընդհանուր արտադրանքը տալիս և բուսաբուծության մեջ անհատական անահետ թյուններում՝ 43,7 տոկոս աճ, իսկ կոլանտեսություններում՝ 90,5 տոկոս աճ և կենդանաբուծության մեջ՝ 50,3 տոկոս աճ։ Ակսովիսով մի շնչին ընկնող լեկամուտը կամ զյուղացիական անահետ թյան չքափոր-միջակ հիմնական մասսաների բարեկեցությունը կամի 45,8 տոկոսով, կհասնի կորսնատեսությունների մեջ համախմբվածների համար 77,1 տոկոսի։ Հընդամյակի ընթացքում մի հեկտար հողի ընդհանուր լեկամտայնության աճումը կազմում է 33 ոռորդի, ալսինքն՝ 66 տոկոս, վոր ապացույց և հողի արտադրողականության չափաղանց բարձրանալուն։

10. ՏՐԱՆՍՊՈՐՏ

Անդրկովկասան ԱՄՖԽՀ լերկաթուղարին տրանսպորտի գարչյեկարուղիները, գացումը յետ և մեռմ ժողովրդական առնեսության ընդհանուր զարգացումից։ Ակսած 1914 թվից մինչև այսոր Անդրկովկասում չի շինված վայ մի նոր լերկաթուղարիք,

բացառությամբ նոտաների — Ողուզգեթ ճյուղի: Մինչդեռ, Անդըրկովկասլան յերկաթուղիների բեռնաշրջանառությունն աճում է և արդեն 1928 թվին անցել է 1913 թվի փոխակրանքից, իսկ 1933 թվին բեռնաշրջանառությունը կամ 12,000 հազ. տոննից ավելի (առանց նավթամուղի), կամ ավելի քան 100 տոկոսով: Բեռնաշրջանառության դինամիկայի բնութագիրը առևտրական գնացքներում (առանց տնտեսավարական բեռների) արտահայտվում է հետևյալ թվերով. 1913 թվին — 4,8 միլ. տոնն, 1925—26 թվին — 4,4 միլ. տոնն, 1928—29 թվին — ավելի քան 6,0 միլ. տոնն, 1932—33 թվին — մոտ 11 միլ. տոնն:

Բեռնաշրջանառության աճին զուգընթաց աճում է նաև մարդատար գնացքների փոխակրանքը (ուղևոզն), 1913 թվին — 7,7 միլ. մարդ, 1927—28 թվին — 9,3 միլ. մարդ, 1928—29 թվին — 9,8 միլ. մարդ, 1932—33 թվին — 12 միլ. մարդ (29^0):

Անդրկովկասի յերկաթուղիները պետք է առաջնուց պատրաստ լինեն բեռնատար ու մարդատար գնացքների հեղեղի արմատական փոփխությանը, վոր սպասվում է, յերբ հնդամյակի ընթացքում ավարտվի Սև ծովի և Զուլֆալի յերկաթագծերի կառուցումը, յերբ սկսվի Տկվարչելու քարածխի մշակումը և Արթիկի տուփի արտահանումը:

Տուփի փոխադրման կապակցությամբ նույնպես պետք է հարց զբվի Սանահին — Լենինական ուղեմասի ելեկտրիֆիկացիայի մասին: Մուծումների ընդհանուր գումարը յերկաթուղաշինարարության մեջ նախատեսված է 145 միլ. ռուբլի, բայց հենց այժմ նկատելի յե (նավթի, մանդանի և տուփի փոխակրանքներն ուժեղացնելու հետևանքով), վոր այդ գումարը պետք է բարձրացվի՝ մինչև 165 միլ. ռուբլի: Պլանով նախագծված ձևունարկումների հետևանքով փոխակրանքների ինքնարժեքը կընկնի 11 տոկոսով, և, չնայած դրան, մինչև այսօր դեփիցիտային Անդրկովկասլան յերկաթուղին (1928—29 թվին գեփիցիտը հաշվվում էր 5,57 միլ. ռուբլի) հնգամյակի վերջին կտա 4 միլ. ռուբլի ոգում:

Նոր յերկարություն ունեցող մաղիստրալը վերակառություն ունեցող միաժամանակ՝ անհետացգելի խնդիր և հանդիսանում Սև ծովի և Բաղու — Զուլֆա յերկաթուղագծերի լրացուցիչ շարունակության ավարտումը, այսինքն՝ այն յերկու մաղիստրալի, վորոնք վճռողական նշանակություն ունեն ԱՄՖԽՀ ժողովրդական ամբողջ տնտեսության հա-

մար և կարևորագույն նշանակություն՝ ամքողջ Միության համար Ալդ զծերի կառուցվելիք շարունակության ընդհանուր էերկարությունը համասար և 320 կիլոմետրի (171—Սևծովի զիծը և 149—Բազու—Չուլֆալի զիծը): Պահանջվում են 78 միլ. ոռուր. ներգրամներ:

Դեպի Անգրկովկասյան լերկաթուղիները և դեպի վերոհիշվալ հիմնական մազբատրախները պետք և անցկացվեն մի շարք հյուղեր, վորոնց կառուցումն արդարանում և արդյունարերություն ու զյուզատնահասության այն ճշուղերի զարգացմամբ, վորոնք խարսխվելու յեն նրանց վրա:

Արգյունարերական յերկաթուղիներից նույնմբերին ավարտվել ե Լենինական—Արթիկ զիծը՝ տուժ արտահանելու համար:

Պահնը ծրագրում և կառուցել Անծովլան յերկաթուղուց Ոչեմշերի—Տիվարչելի զիծը գեղի Տիվարչելու քարածխալին հանքերը, ինչպես նաև Դաթարի զիծը, վորով Դաթարի պղնձահանքերի կոմբինատը պետք և միացվի Բազու—Չուլֆա յերկաթուղագծին: Կառքեսանի յերկաթահանքերը մշակելու հետեանրով՝ ծրագրվում է անցկացնել Գլանջա—Դաշքեսան նեղաղուր (յզկօկօլեյնայ) յերկաթուղագիծը, 53 կիլոմետր յերկարությամբ և 65 միլիոն ոռուրի արժողությամբ:

Նկատի ունենալով անտառանյութերի արտածումն ուժեղացնելու և Անգրկովկասյան յերկաթուղիներին սեփական ունակալներ (շղալա) մատակարարվելու անհրաժեշտությունը, պլանը ծրագրում է կառուցել անտառանյութերի վորխաղրության համար մի շարք նոր զծեր, ինչպես, որինակ (հերթական կարդով)՝ Թիւալ—Ախմեթի, Մամտեղի—Մաթիսոնջի, Զուղդիդի—Զվանի, Բաղդադի, Բղիրի, Սամտեղի—Մալխինութիւնի զծերը:

Աչքի տառջ ունենալով բամբակագրբծության զարգացումը և առհասարակ, անտառության վերելքը, ծրագրված է կառուցել ընդհանուր ու զյուղատնահասական նշանակություն ունեցող հետեւալ յերկաթաղծերը. Յելլախի—Ստեփանակերտ, Սարդարաբաղ—Սառիջալուր (բամբակ), Ազտափած—Խջնան, Գորի—Ցըխինդալի, Յելլախի—Նուխի, Կուրբա-Խաչմատ:

Այս բոլոր յերկաթուղիների ընդհանուր յերկարությունն է 472 կիլոմետր, 41 միլ ոռուր. արժողությամբ Ալպիսով, հնգամյակի վերջին ԱՄֆալ կսառանա ուստային նոր ուղիներ՝ 794 կիլոմետր յերկարությամբ (53 կիլոմ. նեղաղուր զիծ), վորոնց հա-

մար մուծումների ընդհանուր գումարն է 119,500 ռուբլի և 8
միլ. ռուբլի նեղաղուր յերկաթագծի համար:

Ա.Սֆինչ ուղիներ. Ա.Սֆինչ կազմի մեջ մտնող հանրապե-
տությունների սալլուղիների (գուժեվոլ) ցանցի ընդհանուր յեր-
կարությունը, կլոր թվով, հավասար է 19,000 կիլոմետրի, վո-
րից՝ խճուղիներ—6,000 կլմ., գետնուղիներ (գրունտովայա)՝
13,000 կլմ., հասարակական նշանակություն ունեցող ճանա-
պարհներ—4,400 կլմ., հանրապետական—3,400 կլմ. և տեղա-
կան—7,400 կլմ., առաջերման ուղիներ (պոդյեղնուու)՝ 3,800
կիլոմետր:

Նկատի ունենալով Անդրկովկասում յերկաթուղիների ցան-
ցառ ցանցը, հաղորդակցության ջրուղիների կատարաւ բացա-
կալությունը և Անդրկովկասի լեռնային ռելիեֆի պայմաններում
նոր յերկաթուղիներ անցկացնելու դժվարությունը, խճուղիները
հսկայական նշանակություն են՝ ստանում յերկը եկոնոմիկա-
լի մեջ:

Ճանապարհների ցանցի մեծ մասը, անցնելով Անդրկովկա-
սի գեղեցկատեսիլ անկյուններով, հանդիսանում են տուրիստա-
կան մեծ նշանակություն ունեցող ճանապարհներ:

Ա.Սֆինչ մեջ ճանապարհների պահպանությունն ունորությունը, նկատի ունենալով նրանց բնորոշ առանձնահատկու-
թյունները (վերին շերտի ավելի արագ մաշվելը՝ զառիթափ
թեքվածքի ու պտուլտների հետևանքով. ամբողջ տարվա ըն-
թացքում անցնդհատ շարժումը ճանապարհներով՝ այսպես կոչ-
ված, «ամառային ուղիներ» դաշտի միջով, խճուղիների կողքով
չլինելը, սիստեմատիկ պայքարը լեռնային վտակների, հեղեղում-
ների, խոռոքի (օբվալ), լեռնային դիք զառիվայրերի փլավածք-
ների (օչուու) գեմ. լեռնանցքների պահպանությունը, վորոնց
թիվը միայն շահագործվող ճանապարհների վրա 20 և, 7,000-ից
մինչև 9,000 վունաչչափ բարձրությամբ),—նստում և շատ ավելի
թանգ, քան ԽՍՀՄ հարթ վայրերում:

Նոր ճանապարհներ անցկացնելը նույնպես նստում և սո-
վորականից բավական թանգ, վորովհետև նրանց ծրումը (տրաս-
սիրովկա) կատարվում և մեծ մասամբ լեռնային ռելիեֆի ծանր
պայմաններում:

Այսպիսս, որինակ, 1 կիլոմետր սովորական գետնուղու
(գրունտուղի) կատարցումը Ա.Սֆինչ հարթ տեղերում նստում և
500-ից մինչև 1000 ռուբլի, մինչդեռ Ա.Սֆինչ մեջ լեռնային գետ-

նույղու 1 կիլոմետրի կառուցումը՝ նստում և 10,000 ռուբլուց (Արդարաթիւր—Կուրաթիւր) մինչև 30,000 ռուբլի (Սվանեթիայի ճանապարհը), ալիքնքն՝ 20—30 անգամ ավելի թանգ:

Պահնը նախահանում և լայն մաշտարով ծավալել ճանապարհների նորոգութիւնը, չինել մի շարք նոր ճանապարհներ ու արհեստական կառուցվածքներ, մի շարք գետնուղիներ վերածել խճուղիների, զարդացնել ճանապարհների կատարելազորձած տեսակների շինարարութիւնը, ոգտազործելով այդ նպատակի համար տեղական նյութերը (նավթյա ու բնական ձևութերը, կուսրը, ինֆուզորիսում):

Հնդամէա ողլանով ծախսի ընդհանուր գումարը կկազմէ 108 միլ. ռուբլի, վորից 11 միլ. ռուբլի պետք կլինի՝ իրազործելու հանդիպական (встречная) ավտոմոբիլային շարժման խընդիրները: 97 միլիոն ռուբլի կապահովի ԱՄՖԻՀ ճանապարհային անտեսութիւն այն վերակառուցումը, վոր ծրադըել և ողլանը: Դրա մեջ են մանումն ողլանաչափ այն աշխատանքները, վորոնք կազմած են խճուղիների մազիսարալի վրա տեղի ունեցող փըլվածքների, փլուզումների դեմ պայքարի հետ. վորոշ տեղերում շրջապատւլա նոր ճանապարհ անցկացները. խճուղիների վերածել բոլոր այն գետնուղիները, վորոնք ալսորվա բեռնալարվածության պայմաններում անտեսուղիս ավելի նպատականարժար կերպով կարող են սպասարկվել ավտոարանսպորտով. անցկացնել խճուղիների մի շարք նոր մազիսարալներ՝ կազ հաստատելու համար վերաթուղիների և կարգած շրջանների անտեսական կինարունների հետ (Ավանեթիա, Խեռուբեթիա, Զանգեզուր, Թուրքուան, Նախիջ. ԱԽՀ). կառուցել առքերման (օլոյյեղնուու) ուղիներ լեռնա-անտառային և այլ ձեռնարկությունների համար, հիմք դնել փորձնա-հետազոտական զործին և մշակել այն տիպի ճանապարհները, վորոնք ամենից ավելի յեն համապատասխանում տեղական պայմաններին (լեռնալին քնությունը ծանր պրոֆիլը, կիզիչ չոր կիման արեկլում, տեղումների առատությունն արևմուտքում, գետնի հատուկ պարմանները և այլն):

Բնդհանուր առմամբ, հնդամէակի ընթացքում կատացվեն հետեւալ հասեանքները. կշինվին կատարելազործված ախպի ճանապարհներ—634 կիլոմետր, կանցկացվեն միանդամայն նոր ճանապարհներ—741 կլմ. փաստուն նորինորո կվերականգնեն հին անապարհներ—3,972 կլմ., խճուղու վերտը կնորոգվեն

2,007 կիլոմետր տարածության վրա. խճուղիների ցանցը կամելանա 533 կիլոմետրով:

Հնդսմին՝ կվերանորոգվեն արհեստական անհրաժեշտ բոլոր կառուցվածքները, և կը ինվեն մի շարք կամուրջներ, ԱՄֆիչ կատարելագործված ճանապարհների գարգացումը կարագացնի փոխակրանքները 30 տոկոսով և կեժանացնի փոխակրանքը մոտ 20 առկոսով, վոր ժողովրդական տնտեսությանը կտա 25 միլիոն ռուբլի խնայողություն՝ տրանսպորտի բնագավառում:

Ա.Մֆիչ պայմաններում տրանսպորտի
Ավտոբանապորտ

մեքենացումը խաղում ե վճռողական դեր: Անդրկովկասում մինչեւ ալսոր ել սալլաքարշ տրանսպորտը կատարվում ե վոչ թե ձիերով, ալլ լեզներով, յեղներով՝ լծված յերկանիվանի սայլին:

Պարզ է, թե վնայիսի հսկայական վեաս և կրում ժողովը դական տնտեսությունը ալդ տեսակ տրանսպորտից, վորի շը անառողջությունը կատարվում ե չափազանց դանդաղ տեմպով: Վորապեսզի գյուղացին կարողանա կենտրոնին մոտիկ (20—25 կլմ.) ռայոններից իր աշխատանքի արտադրանքը տանելի քաղաքի շուրջաները, նա սակայն արդարացնելով տանելի քաղաքի շուրջաները, նա սակայն արդարացնելով այս հանգամանքը նրան հնարավորություն չի տալիս իր շուրջ փչացող ապրանքը տանելու: Այդ պատճառով մեքենացման արագացումն Անդրկովկասի պայմաններում դարձել ե անհետաձգելի անհրաժեշտություն:

Ա.Մֆիչ առաջ դրված նոր խնդիրը, տուրիզմը զարգացնելու ձեռնարկումների իմաստովի հրամայողաբար թելտղրում է, թե անհրաժեշտ է ընդարձակել ավտոտրանսպորտը, վորը և միայն կարող է հիմք հանդիսանալ տուրիզմի լայն զարգացման համար:

Ավտոտրանսպորտի այժմյան կացությունը շատ և յետ մնում ժողովրդական տնտեսության պահանջներից: Ընթացիկ տարրում Աղբբեջանն սպասարկվում էր 8 դժով՝ 626 կիլոմետր յերկարությամբ, վրաստանը, վոր առանձնապես հարուստ ե տուրիզմի ասպարիզում իր ունեցած հնարավորություններով, և վորտեղ կենտրոնացած է կուրորտների մեծ մասը, սպասարկվում էր 21 դժով՝ 1.425 կիլոմետր յերկարությամբ. Հայաստանն սպասարկվում էր միայն 14 դժով՝ 798 կիլոմետր յերկարությամբ: Համաձայն պլանի, յենթաղբարվում ե դժերի թիվը հասցնել Աղբբեջանում 30-ի՝ 1.893 կիլոմետր, յերկարությամբ, վրաստանում՝ 38 դիմ՝ 2.719 կիլոմետր, յերկարությամբ, Հայաստանում՝ 32 դիմ՝ 2.412 կիլոմետր:

Առավականութիւններ ԱԱՖԲԷՀ նավահանգիստները, վորովես
մեծ քանակությամբ մասսայական բեռ-
ների առարձան կետեր, խոշոր նշանակություն ունեն վոչ միայն
ԱԱՖԲԷՀ համար, այլև ամբողջ ԽՍՀՄ համար, վորովհետեւ մեր
նավահանգիստների ամենազլիսավոր բեռները հանգիստնում են
համամբութենական նշանակություն ունեցող բեռներ (նավթա-
մբերքները, մանգանը): Այս իսկ նավահանգիստների միջոցով
սպասարկվում են թուրքական ու պարսկական տրանզիստները և
լիվրոպական երսողորդի բաղմաթիվ առարկաները:

1927—28 թիվն անգրկովկայան նավահանգիստների ընդ-
հանուր բեռնաշրջանառությանը յեղել է 7.077.059 տոնն, վոր
տալիս և 7.6 տոկոս համելում 1926—27 թվի հանգեց:

Տեղաբաշխութեակաման հետեւանքով՝ պլանը նախա-
զծում և կառուցել մի նոր նավահանգիստ՝ արտահանելու Տըկ-
գարչելու քարածուխը (լենթաղրվում և Սուխումում):

Նկատի ունենալով նավթի արտածման (եքսպորտի) ուժե-
ղացումը, լենթաղրվում և Բաթումի նավահանգստում վերջաց-
նել նավթալին ամբարտակը լիբրկարացնելու աշխատանքները-
սկսել ցամաք բեռների բարձրան ու բեռնաթափի (ցամաքարեռ—
ցոկրցնայ) ծովափի վերաշինության աշխատանքները, նավա-
հանգստի պաշտպանական կառուցվածքների շինության աշխա-
տանքները, ծրագրվում և նույնպես ամբողջովին մեքենացնել
նավահանգստացին աշխատանքները և այլն:

Փոթու նավահանգստում պլանը նախատեսում և բարե-
կարգել նավահանգիստ մտնելու և դուրս դարձու պայմանները:
Ապա պետք և վերջացնել հյուսիսային ծովամբարտակի կառու-
ցումը, նավահանգստացին աշխատանքների մեքենացումը և բնակ-
շինարարության ընդլայնումը:

Կասպից ծովի նավահանգիստների վերաբերմամբ պլանը
նախադառաւ և կատարել ցամաքարես փոխակերպությունը վերակազ-
մելու գործը, Բաղդի նավահանգիստը կառուցելով ժամանա-
կակից տիպին՝ նախկին փայտա նավամատուցյների փոխա-
րեն, կառուցելով պահեստներ, մեքենացնելով նավահանգստալին
աշխատանքները նախատեսվում և կառուցել նոր նավահանգրս-
տացին աշխատանքները նախատեսվում և կառուցել նոր նավա-
հանգիստ Քուսի գետարեանին և ծավակել աշխատանքները իլիչի-
ու. Լենքորանի նավահանգիստներում:

Միաժամանակ պլանը ծրագրում է կառուցել Ապշերոնի ջրանցքը, վորն ունի ժողովրդա-տնտեսական մեծ նշանակություն:

ԱՍՖԻՆ մեջ տրանսպորտի հուրավորությունների սահմանափակ լինելու հետևանքով հատուկ ուշադրություն պետք է դարձվի ներքին ջրուղիների վրա: Թեև Անդրֆեղերացիալի գետերն ունեն լեռնալին ծագում և արագընթաց են, այնուամենայնիվ նրանք պետք է ոգտագործվեն վորպես հաղորդակցության լրացուցիչ ուղիներ: Հայտնի յեւ, վոր իր ժամանակին Անդրկովկասի գլխավոր գետերը՝ Քուռ և Ռիոն՝ յեղել են նավարկելի բավական մեծ տարածության վրա:

Մինչև այժմ բավարար ուշադրություն չեր դարձվում ԱՍՖԻՆ ներքին ջրուղիների վրա, և այնտեղ չկար քիչ թե շատ կարգավորված նավագնացություն: Մինչեւ բեռնաշրջանառությունը Քուռ գետի վրա, տեխնիկական չափազանց պրիմիտիվ սկայմանակերում, առաջ հասնում եր 100 հազար տոննի: Ներքին ջրալին ուղիների չնչին նշանակության մասին գոյություն ունեցող կարծիքը ճիշտ չե ընդհանրապես, իսկ Անդրկովկասի վերաբերմամբ—մասնավորապես: Բեթե գետերն իրենց լեռնալին տեղամասերում չեն կարող ոգտագործվել կանոնավոր նավագնացության համար՝ առանց շլյուզներ (Ջրաբեկաներ) ու ջրանցքներ շինելու բարդ աշխատանքների, այնուամենայնիվ՝ նրանցով կարելի յեւ անտառանյութեր գետահետել (տեղափոխել): Սակայն Անդրկովկասում կան նաև մեծ գետեր (Քուռ, Ալազան, Ռիոն, Ռոպի, Ծիվա, Պիշորա), վորոնք բավական յերկար տարածությամբ հոսում են հորթավայրերով: Այդ գետերը լիովին կարող են սպասարկել նավագնացության պահանջները:

Այս բոլոր գետերը պլանաչափ ուղարկործելու գեպքում ԱՍՖԻՆ մեջ կարող է ստեղծվել ներքին ջրուղիների լայնածավալ ցանց: Անհրաժեշտ է նույնական նշել վոր Անդրկովկասի գետերը չեն սառում, այդ պատճառով նրանց կարելի յեւ ոգտագործել տարերուրուր:

Ներկայումս, մինչև ամբողջությամբ կլերջանագետերի բոլոր սիստեմների ու ճերի հետազոտությունը, կարելի յեւ անպայման նավագնացության արժեք ունեցող համարել հետեւյալ ջրուղիները: Քուռը իր գետաբերանից մինչև Ալազան գետի խառնարանը և ավելի բարձր (686 կլմ), Ռիոնը՝ Փոթուց մինչև Քութայիս (165 կլմ) և Սևանա լիճը: Էստ յերեսութին միքանի ուրիշ

զետեր ել հետագայում՝ կարող են ոգտագործվել նախագնացության համար։ Իսկ զետերի լաստագնացության համար հարմար ժամանակը կատարեց ծովի ավագանի համար կկազմեն մոտ 1.800 կիլոմետր, Այ ծովի ավագանի համար—1.100 կիլոմետր։

Հնդամակի ընթացքում յենթադրվում է ներքին ջրուղիների շինարարության մեջ մտցնել 4.165.000 ռուբլի։ Պլանը ծրագրում և մի շաբթ հետազոտական աշխատանքներ կատարել Քուռ, Ռիոն զետերում և Անոնա լճում։

11. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ, ԿՈՄՄՈՒՆԱԼ ՈՒ ՍԱՌՅԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՕԲ-
ՅԱՐԱԳՈՎՐԾՈՒՅԻՆ

Պարզվում է, վոր Ա.Ա.Ֆեօձ բնակչություն մի չնչին հասնող բնակարանային տարածության նորմաները վճռ միայն ցածր են առողջապահական 6 քառ. մետր նորմայից, ալլեւ ցածր են Միության մեջ յեղած միջին նորմայից։ Այսպես, որինակ, առ 1 հոկտեմբերի 1928 թվի Աղդրեցանում բնակելի տարածության նորման կազմում եր 3,99 քառ. մետր, Վրաստանում—5,49 քառ. մետր, Հայաստանում—2,52 քառ. մետր, և Անդրֆեդերացիալում—միջին հաշվով՝ 4,41 քառ. մետր։

Պատերազմը, հեղափոխությունը, աղդամիջյան ու քաղաքացիական պատերազմերը սաստիկ աղդեցին բնակելի փոնդի վրա Ա.Ա.Ֆեօձ մեջ՝ նոր շինարարությունը դադարեց, բնակիոնդի մի մասը յենթարկվեց քայլքայման, մինչդեռ քաղաքների բնակչությունը շարունակում եր անել։

Եկերջարկիս, Անդրկովկասում գործում է նաև մի այնպիսի գործոն, ինչպիսին և յերկրաշարժը, վորից առևժած շրջանները մինչև ալոսոր չեն կարողանում կարգի ընկնել. քանզված ընակելի տարածությունը չի վերականգնած վճռ միայն լենինականում, ալլեւ Դորիսում, Շամախում և Ախալքալաքում մինչև այսոր դեռ մնում են այն ավերակները, վերոնք հետևանք են ալիսակ յեղած յերկրաշարժերի։

Պլանն անհրաժեշտ և համարում ամենակարճ ժամանակամիջոցում հասնել բնակելի փոնդի այնպիսի ավելացման, վորը կարողանար ապահովիլ նորմալ բնակտարածությամբ առկա (նաև պահանջանակ) բնակչությունը, ծննդաբերությունից առաջացած բնակեան աճը, բնակչության հոսանքը զետի քաղաքները և, վեր-

ջապես, ծածկել բնակարանային այն մաշվածքը, վոր չի ծածկը-վում վերականդնման նորոգությամբ:

Դրա հետ միասին պլանն առաջադրում և բանվորական բնակչինարարության Փօնդի ընդարձակման հարցը, մանավանդ բանվորական խոշոր կենտրոններում, ընդումին՝ այստեղ խնդիր և դրվում՝ բնակտարածությունը հասցնել առողջապահական 6 քառ. մետր նորմային: Այդ տեսակետից մեծագույն ուշադրության և արժանի ԱՍՖի ինդուստրիալ կենտրոնը՝ Բագուն:

Բնակչինարարության մեջ մուծվելու յի 210 միլիոն ոռուր-լի, վորի հետևանքով ընդհանուր տարածությունը կաճի, ճիշտ և, դանդաղ, ընդամենը 4 տոկոսով,—սակայն Փօնդի ըայն մո-բիլիզացիան և բնակտարածության վերաբաշխումը բնակչության առանձին խմբակների միջև հնարավորություն կտա՝ ապահովե-լու բանվոր բնակչությունը առողջապահական 6 քառ. մետր նոր-մայով:

**Կոմմունալ օբյեկտա-
րաբյուն** **Բնակարանալին շինարարությունը զուգըն-
թաց անհրաժեշտ և ուժեղացնել կոմմու-
նալշինարարությունը, վորովինետ ԱՍՖի Հ
քաղաքները զուրկ են սանիտարական-առողջապահական, տրանս-
պորտային և կուլտուրական սպասարկման ամենատարրական միջոցներից:**

Հնդկամլտկի համաց ներդրումների քանակը վորոշված և 97 ու կես միլիոն ոռուրի և գործադրվելու յի այն աշխատանքների վրա, վորոննք վերաբերում են ջրամատակարարմանը, կանալի-դացիային (կոյուղի), քաղաքային տրանսպորտին, սանիտա-
րական-առողջապահական ձեռնարկումներին, բարեկարգություն-
ի այլն:

**Սանցարանային օբ-
յեկտաբյուն** **Գյուղատնտեսության արտադրանքի
(մանավանդ շուտ փչացող մթերքների
մասում), ինչպես նաև ձկնորսության
արտադրանքի ավելացումը պահանջում է կազմակերպել սառցա-
րանների լայն ցանց՝ ինչպես Անդրկովկասի յերկաթուղիների
ուլուավոր մաղիսարալը, նույնական համար հանդուցալին կմտերն
ապահովելու համար: Սանցարանալին պահեստների ընդհանուր
տարրությունը հնգամյակի վերջին կենթադրվում է հասցնել
17.000 տոննի, այդ գործի մեջ մացնելով 8.375 հազ. ոռուրից
ԱՍՖի մեջ սանցարանների նորմալ գործունեության համար
նախատեսված և սարքավորել մի շողնավ-սանցարան (ուժի-**

ժիրտառոր), 1.000 տոնն բեռնատարողությամբ, վորը լեռթեեկելու լե Փօթուց մինչև Արևմտան Յեվրոպայի նավահանգիստները Բացի դրանից, Կասպից ծովում՝ ձկնարտանների ու Բադի հավաքի ու փոխակրանքի սառցարանի միջն կազ պահելու համար՝ յերթեեկելու լեն հատուկ սառցարտան-լաստանավեր, 150—200 տոնն բեռնատարողութլամբ, կամ շողենավեր՝ հատուկ կամերաներով։ Յերկաթուղիների զծով յենթադրվում և պատրաստել զուղաշերմ (իդուերմիական) վագոնների պարկ։

12. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Հնդամյակի ընթացքում առաջին նշումներով հետեւալ փոփոխությունն և սպասվում Ա.Աֆիօն բնակչության թվի մեջ (հազար մարդով, առ 1 ապրիլի),—տես աղյուսակ № 11:

Աղյուսակ № 11

Բնակչության կատեգորիաներ	1928 թ.	1933 թ.	1933 թ. %-%-ով առ 1928 թ.
Քաղաքային	1.490,2	1.734,8	116,5
Դյուքսական	4.569,8	4.890,0	109,5
Հնդամենը	6.060,0	6.724,8	110,9

Ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերում դրադված անձերի թվի աճը հնդամլակի ընթացքում հաշվվում է 20,3 տոկոս։ Վարձու աշխատանքը (ասանց զյուղատնտեսության) այդ միենուքն ժամանակամիջոցում, նշումնով, ավելանում է 35,1 տոկոսով։ Այսպիսով, ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարների հետեւանքով, աշխատունակ բնակչության աճի տեմպը բարձական յետ և մնալու ժողովրդական տնտեսության մեջ զրադված անձերի և, մանավանդ, վարձու աշխատանքի աճի տեմպից։

Մի շարք գործարանների, Փարբիկանների և լեռնա-նլութան (ձօբայալայա) ձեռնարկությունների բանի զցելը և բոլոր ձեռնարկությունների 7-ժամյա բանվորական որվա անցնելը լրացոցիչ հերթափոխերով, անհրաժեշտություն կառաջացնեն՝ ներդրավելու ցենզացին արզյունաբերության բանվորների զգացի կաղըեր։ Պահնը նախատեսում և ցենզացին արդյունաբերության մեջ (ասանց Ազնեփթի) բանվորների թվի աճ 57,8 տոկոսով։ Առանձնապես մեծ աճ ծրագրվում և տեքստիլ արդյու-

նաբերության մեջ—1927-28 թվի 7.900 մարդուց մինչև 25.840 մարդ՝ 1932-33 թվին, այսինքն աճ 227 տոկոս, քարածխային արդյունաբերության մեջ—1.210 մարդուց մինչև 3.410 մարդ (181%/₀), կարի արդյունաբերության մեջ—1.130 մարդուց մինչև 4.090 մարդ (263%/₀): Նավթարդյունաբերության մեջ բանվորական ուժի թիվը հնգամյակի ընթացքում մնում է համարյա անփոփխ:

Եթեզալին արդյունաբերության մեջ բանվորական ուժի կազմի մեջ,—արտադրության համակենտրոնացման ու գրա հետ կապված ռացիոնալացման վերաբերող ձեռնարկությունների հետեանքով, ինչպես նաև յոթժամյա բանվորական որ մտցնելու պատճառով յերկու և յերեք հերթանի աշխատանքի անցնելու հետեանքով,—կընկնի սպասարկող կրտսեր անձնակազմի տեսակարար կշիռը: Պետք է ընկնի նաև կանտորային և գրասեննեկային անձնակազմի տեսակարար կշիռը, իսկ տեխնիկական անձնակազմի քանակը պետք է տա բացարձակ ու հարաբերակտն նշանակալի աճում:

Վարձու բանվորական ուժի մեծ աճ և տալիս նաև շինարարությունը, տրանսպորտն ու կապը համարյա մնում են անփոփխ:

Ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերից վարձու բանվորական ուժի նշանակալի աճ պետք է տան առևտուրը և սոցիալ-կուլտուրական հատվածը:

Գործազրկություն ***Բաղաքային գործազրկությունը** հիմնականում աճում է գյուղից հեռացող աշխատավորների հաշվին: Միաժամանակ տեղի ունի բանվորական ուժի մշտական ներհոսանք մյուս հանրապետություններից գլխավորապես զեղի Անդրկովկասի խոշոր քաղաքները՝ Բագու, Թիֆլիս և Բաթում: Վերջապես, աշխատառնակ քաղաքացին բնակչության աճը ԱՄՖԽՀ մեջ վերջին տարիներս ավելի բարձր էր ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանուժի աճի տեմպից, այնպես վոր քաղաքներում աճում ելին պահեստի բանուժի սեփական կադրեր:

Գյուղատնտեսության մեջ, ըստ աշխատանքի հաշվեկշռի, գյուղական վարերում չողտագործված բանուժի քանակը,—աշխատաշատ (Երևանի տրյումիք) մշակությունների նշանակալի զարգացման և մշակվող հողի տարածության զգալի ընդարձակման հետեանքով,—ընդհանուր առմամբ պակասում է և 1927-28 թվի 14,7

տոկոսից համառում ե 1932-33 թվին 9,2 տոկոսի: Բայց պահեստի բանումը Անդրկովկասի գլուզական վայրերում հնդամյակի վերջին, այնուամենայնիվ, չափազանց մեծ և—220—230 հազար մարդ: Ալսպիսով, գործադրկության հիմնական աղբուրը դեռ չի կորցնի իր նշանակությունը:

Քաղաքային գործադրկության հեռանկարները պատկերացվում են հետեւյալ ձևով. գործադրութիւնների թիվը 1927-28 թվի համար, ԱՄֆիչ Աշխատողկոմատի տվյալներով, համարվում է 59,9 հազար մարդ: Աշխատոնակ քաղաքային բնակչությունը, պերսպեկտիվային հաշվարկներով, ավելանում է 168,9 հազար հոգով, հետեւարար, ընդհանուր ափելցուկը կազմում է 228,8 հազար մարդ:

Քաղաքային վայրերում ժողովրդական տնտեսության մեջ ներգրավվածների թիվը կերպմի մոտավորապես 98.000 մարդ: Բացի զրանից, քաղաքներում զլուզատնտեսության մեջ 8.000 մարդու ներգրավումը, կրթական հիմնարկներում 15.000 մարդու ներկայությունը, անային տնտեսուհիների և մնացած պահպանական ներկայությունը, անային անառաջնորդությունը (իժդիվինեցների) 50.000 հոգով ավելանալը 73.000 մարդով ավելացնում և աշխատազուրկ քաղաքային բնակչության թիվը վարձու անձնակազմի հետ միասին դա անում է 171.000 մարդ:

Այսպիսով, գործադրութիւնների թիվը, վորակն հաշվեկշռային մնացորդ, հնդամյակի վերջին կազմում է 58.000, ալսինքն՝ մնում է համարված 1927-28 թվի մակարդակի վրա, և վորչափով 1928-29 թվին Անդրկովկասի ժողովրդական տնտեսության վերահսկիչ թիվով գործադրութիւնների թիվն ավելանում է 10,4 տոկոսով, անհրաժեշտ և հավասար գործադրկության պակասելու ուղղությունը այն բեկումը, վոր ավելի պարզ կարտահայտվի հնդամյակի միայն յերկրորդ կեսին, յերր բանի կընկնեն մի շարք մեծ ձեռնարկություններ:

Գործադրկության ընդհանուր թիվ մեջ, հավանորեն, կազմելանա անվորակալ աշխատանքի անձանց, ինչպես նաև առաջին անդամ աշխատանք վորոնող մարդկանց տեսակարար կշիռը:

Յեթե մինչեւ այսոր գործադրկության դեմ պարբարի հետ կապված ձեռնարկությունները տարվում ենին, պլասավորապես, գործադրութիւններին նկատման աշխատանքային ոգնությունը ցույց տալու գծով (կոլլեկտիվների կազմակերպում և հասարակական աշխատանքների անցկացում), ապա՝ 1928-29—1932-33 թ.թ. հընդամյակում ծանրության կենտրոնը յենթադրվում և փոխադրել

այն ձեռնարկումների վրա, վորոնք վերաբերում են գործազուրկների, մանավանդ հարակա (զատօնին) խմբերի, ուսուցմանը և վերաբուժմանը:

Գործազրկության գեմ պայքարի վրա յենթադրվում է ծախսել ընդամենը 9,687 հազար ռուբլի, վորից՝ գործազրկությունների ուսուցման և վերաբուժման համար—3,500 հազար ռուբլի, աշխատավայրերի վերաբերյալը՝ համար—3,350 հազար ռուբլի, հաստիքական աշխատանքներ անցկացնելու համար—1,950 հազար ռուբլի և այլ ծախսերի համար—887 հազար ռուբլի:

Աշխատավարձ

Հնդամյակի համար աշխատավարձի նախագծման ժամանակ վորապես ընդհանուր դիրքավորում (ուստանովկա) ընդունվել է 1928 թվի մայիսին ԽՍՀՄ Պետպլանի ցուցումն այն մասին, թե ոեալ աշխատավարձի աճը պետք է վորոշել աշխատանքի արտադրողականության աճի 70 տոկոսից վեչ բարձր: Դրա հետ միասին, իդեկավարություն են ընդունվել ինքնարժեքն իջեցնելուն վերաբերող դիրքեկտիվները:

Հնդամյակի համար աշխատավարձի աճի տեսապը վորոշված է 45,4 տոկոս (նոմինալ), ոեալ աշխատավարձի աճը հասնում է 69 տոկոսի, աշխատանքի արտադրողականությունը (մի բանվորին ընկնող արտադրանքը)—108,3 տոկոս:

Արդյունաբերության պրանձին ճյուղերում աշխատավարձի բարձրացման նախագիծը կազմելիս ուշադրության են առնվիշտ բացի արտադրողականության աճից ու ինքնարժեքի իջեցումից, նաև բանվորների վորակյալ կազմը և այն հանդամանքը, թե անհրաժեշտ ե մեղմել Անդրֆեդերացիայի առանձին հանրապետություններում արդյունաբերության միենույն ճյուղի մեջ աշխատանքի վարձատրության տարբերությունը:

